№ 44 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 — 1908 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 № 44

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16. կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱԶԱՏ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամսվայ համար	„	„		10 ր.
11	„	„	„	„
10	„	„	„	9 ր.
9	„	„	„	8 ր.
8	„	„	„	7 ր.
7	„	„	„	6 ր.
6	„	„	„	„
Մնացած ամիսները ամսական Մէկ ռուբլի				
Ամերիկա տարեկան			„	6 դոլլար
Եւրոպա	„	„	„	30 ֆրանկ
Պարսկաստան		„	„	10 ռուբլի

Նաւթիսճալա նաւթահանքի «Արամազդ» ընկերութեան բանւորները խորին վշտով յայտնում են իրանց ծանօթներին և բարեկամներին իրանց սիրելի ընկեր

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑԻ

եղեռնական մահը, որ տեղի է ունեցել շաբաթ, ամսիս 23-ին։ Յուղարկաւորութիւնը լինելու է վաղը, հինգշաբթի, ամսիս 28-ին, առաւօտեան ժամը 10-ին, Միքայէլեան հիւանդանոցից դէպի Կուկիայի Աստուածածին եկեղեցին (Վորոնցովի մօտ), այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը։

ԿԱՐՕՏԵԱԼ ԹԻՒՐՔԱՀԱՅԸ

Կ. Պոլսի պատրիարքարանի ստացած տեղեկութիւնները, որոնց քաղուածքները առաջ ենք բերում «Մշակի» ներկայ համարում, նկարագրում են Թիւրքահայաստանի տնտեսական վիճակը տխուր գոյներով։

Մուշի, Վանի, Բայազէթի, Բաբերդի, Զէյթունի, Սեբաստիայի կողմերից միատեսակ գանգատներ են լսվում 1907 թվի հունձի պակասութեան և հացի թանգութեան մասին։

Թիւրքահայ գաւառական ժողովուրդը կարօտութեան մէջ է և պէտք ունի կողմնակի նպաստի, որը պէտք է հայթայթէ նրան ուտելու հաց և ցանելու սերմացու։

Շնորհիւ երաշտի՝ անցեալ տարվայ հացահատիկները վատ են զարգացել և խորշակահար լինելով չեն տուել այնքան բերք, որով կարելի լինէր ապահովել երկրի կարօտեալներին։

Գաւառացիները, դիմելով տեղական առաջնորդարաններին, նկարագրում են իրանց ծանր ու անելանելի վիճակը և խնդրում-աղերսում են օգնութիւն, որպէսզի հնարաւորութիւն ունենան ապահովել իրանց մինչև նոր հունձը և սերմանել իրանց արտերը։

Թիֆլիսում կազմված Հանգանակիչ Մասնաժողովի տրամադրութեան տակ կայ արդէն գումար, որով նա կարող է օգնութեան գործի սկիզբը դնել այժմեանից իսկ։ Օգնութիւնը չը պէտք է ուշանայ, որպէսզի նա կարող լինի պահպանել ժողովրդին ներկայ կրիտիկական շաբաթներում, երբ նա անկարող է նոյնիսկ կանաչով և արմատներով լրացնել այն կարիքը, որ ամիսներից ի վեր տիրում է անբերրիութեան մատնված ժողովրդի տանը և այժմ կը սկսէ սուր բնաւորութիւն ստանալ։

Թիւրքահայ ժողովրդի մէջ գործող անձերը պէտք է հոգատար լինեն, որ տեղական գիւղացին կարող լինի կարելին չափ ընդարձակ կերպով մշակել և ցանել իր հողերը, որպէսզի առաջիկայ տարվայ համար նա ապահոված լինի իր կեանքը գոնէ այն չափով, որքան նա կախված է երկրագործութիւնից։

Թիւրքահայաստանը այս տարի գտնվում է նոյն թշուառ վիճակի մէջ, ինչպէս մեր երկրի մեծագոյն մասը, մանաւանդ լեռնադիր շրջաններում։

Այնտեղ էլ բնութեան նոյն երեւոյթները՝ երաշտը և ուրիշ պատահարներ, ինչպէս և մեր երկրում փչացրել են արտերը և միւս բուսականութիւնը, սուր կարիքի մէջ գցելով ժողովրդին։

Եւ եթէ մեր երկրի համար պահանջվում են մեծ գումարներ կարօտեալներին օգնելու համար, նոյնպիսի պահանջ կայ Թիւրքահայաստանի համար։

Եթէ այստեղ մեզանում զգված է նպաստի անհրաժեշտութեան հարցը, նոյնը իր էութեամբ պէտք է զգված լինի և Թիւրքահայաստանում։

Այստեղ մի որոշ չափով ժողովրդին օգնութիւն հասցնելու է կառավարութիւնը, որը արդէն սկսել է յատկացնել գումարներ այդ նպատակով. այնտեղ ժողովրդի յոյսը մնացել է իր աւելի ապահով եղբայրակիցների վրա։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հերքումն զինւորութիւններին վերաբերեալ լուրերի

«Neue Fr. Presse» լրագրի Բեռլինի թղթակիցը հաղորդում է կատարելապէս տեղեակ աղբիւրից, որ Կ. Պոլսից «ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չէ ստացված ռուսական և թիւրքական զինւորութիւնների մասին Կովկասում»։ Բեռլինում կատարելապէս անհաւանական են համարում պատերազմը Ռուսաստանի և Թիւրքիայի միջև և զօրքերի մանր տեղափոխութիւնները այս և միւս կողմից բացատրում են «հայերին խաղաղացնելու անհրաժեշտութեամբ, որոնք վերջերս կրկին յուզվում են» (!)։

«Սուլթանը պատերազմի ոչ մի առիթ չունի։ Եթէ նա այդպիսի պատերազմ ցանկանար, նա պէտք է այն ժամանակը յայտարարէր. երբ Ռուսաստանը պատերազմում էր Ճապոնիայի հետ։ Իսկ երկիւղալի լուրերը Պետերբուրգից, որպէս կարծում են Բեռլինում, տարածվում են դիտմամբ, որպէսզի վախեցնեն Թիւրքիային և ստիպեն նրան, որ այլ ևս գիջումներ չանի Աւստրո-Ունգարիային»։

«Թիւրքաց դեսպանութիւնը Բեռլինում կտրական կերպով հերքում է Թիւրքիայի պատերազմական պատրաստութիւնների մասին տարածված լուրերը։ Թիւրքաց զօրքերին զէնքի կանչելը բացատրվում է նրանով, որ հայ յեղափոխական շարժում կայ (!), որի դէմ թիւրք կառավարութիւնը հարկաւոր է համարել, կարգը պահպանելու նպատակով, զէնքի կանչել մի քանի բատալիօններ»։

—

Թիֆլիսի Նպաստամատոյց Յանձնաժողովի կողմից Գանձակի գաւառի Բաղա գիւղը գնացած լիազոր Ս. Տէր-Պօղոսեանցը պարզել է հետևեալը.

Գիւղացիների ներկայ վիճակը աննախանձելի է։ Պաշարները հատել են և մթերքների մեծ կարօտութիւն է զգացվում։ Գիւղացիները րոպէ առ րոպէ սպասում են պետութեան նպաստին, որպէսզի կարողանան իրանց ապրուստը հայթայթել։

Տներում դեռ շատ մեծ պակասութիւն կայ ամէն տեսակ պարագաների և գիւղացիներից շատերը դեռ չունեն կարգին անկողիններ ծածկվելու համար։

Աշնանացանը կարողացել են կատարել ժամանակին մի որոշ չափով իրանց հարևան գիւղացիների աջակցութեամբ։ Միջին թւով իւրաքանչիւր ընտանիք ցանել է մերձաւորապէս երկու դեսեատին հող։

Գարնանացանի համար մեծ կարիք կայ ժողովրդի մէջ սերմացուի վերաբերմամբ։ Սերմացու կարելի է ճարել շրջակայ գիւղերում, բայց հարկաւոր է ունենալ փող նրան գնելու համար։ Գիւղացիները կը ցանկանային, որ իւրաքանչիւր տան միջոց տրվէր ցանելու միջին թւով 24 պուդ ցորեն և գարի, որպէսզի ապահոված լինի գիւղացին ապագայում։ Բացի այդ հարկաւոր է մի որոշ քանակութիւն կորեկի, կտաւատի, սորեակի։

Հողի մշակութիւնը կը սկսվի մարտի 1-ից և կը շարունակվի մինչև մայիսի սկիզբները։

Գիւղացիները պակասութիւն են զգում եզների և գութանների։ Ամբողջ մեծ գիւղում կայ միայն քառասուն գութան և 160 հատ եզ ու գոմէշ լծելու համար։

Կթան կովեր քիչ կան գիւղում և գիւղացիները յոյս ունեն առաջիկայ տարին ձեռք բերել մի որոշ թւով հարևան գիւղերից՝ պարտքով։

Ներկայումս գիւղում գտնվում են մօտ 2000 հոգի, որոնց համար ամսական կը պահանջվի մօտ 2000 պուդ հաց մինչև նոր հունձի կատարվելը։

Աշխատանքի կողմնակի աղբիւրներ քիչ են։ Միայն մշակութիւնն է, որ իբրև պատահական՝ մի օգնութեան բնաւորութիւն ունի։

Գիւղացիները կազմել են կարօտեալների ցուցակներ և ներկայացրել իշխանութեան։ Կարօտեալների թիւը ցոյց է տրված 2000 հոգի։

Ժողովուրդը ցանկանում է օգնութիւնը ստանալ փողով, որովհետև ինքը կարող է այդ փողով էժան ուտելիքներ ձեռք բերել փոխարէն թանգագին ցորենի, որ բերված կը լինի ուրիշ տեղերից։

Այժմ էլ գիւղացիների մեծագոյն մասը կերակրվում է կորեկով, գարիով, գետնախնձորով։ Գիւղացիները անհամբերութեամբ սպասում են գարնան բացվելուն, որպէսզի օգտվեն ուտելու համար նաև զանազան բանջարներից։

Բոլորովին անօգնական և թշուառագոյն վիճակի մէջ են եօթանասուն տուն, որոնք ոչինչ չունեն իրանց տներում, որոնց պահում են հարևանները, տալով հացի կտորներ մինչև օգնութեան հասնելը։

—

«Т. Л.»-ի թղթակիցը Պետերբուրգից հեռագրում է փետրվ. 22-ից.

Այսօր, դումայական մասնաժողովի նիստում, որին ներկայ էին նաև բարօն Նօլդէն և Կովկասի Փոխարքայի խորհրդի անդամ Ն. Ջունկօվսկին, պաշտ. Սաղաթելեան երկրորդ անգամ յարուցեց այն հարցը, որ թոյլատրվի Բագուի քաղաքապետութեան վարչական ատեանում ներկայ լինել Բագուի նաւթարդիւնաբերողների համագումարի խորհրդի ներկայացուցչին։

Ն. Ջունկօվսկին պաշտպանեց այդ առաջարկութիւնը, իսկ բարօն Նօլդէն վճռականապէս դէմ էր Սաղաթելեանի առաջարկին։

Ձայների մեծամասնութեամբ մասնաժողովը անհրաժեշտ գտաւ ունենալ նաւթարդիւնաբերողների համագումարի ներկայացուցչին Բագուի քաղաքապետութեան ատեանի մէջ։

—

Թաւրիզից գրում են մեզ փետրվ. 21-ից.

Միանդաբից հեռագրում են. «Սամսամ-Սուլթանը, Դուլաբի աղան և Բակիր աղան (օսմանեան հպատակութիւն ընդունած քիւրդ ցեղապետներ), շահզադէ Իմամ-Դուլի միրզայի միջոցով դիմել էին Փարման-Փարմա կուսակալին և ապահովութիւն խնդրել, վերադառնալու և նորից պարսից հպատակութիւն ընդունելու։ Ստանալով այդ ապահովութիւնը, երէկ, մուհարրամի 28-ին, Միանդաբ եկան նրանք։ Այժմ միջոցներ են ձեռք առնված, որ միւս բէկզադաներն էս և Դէբօքրի աղաները նոյնպէս գան Միանդաբ, և նրանց խոստացված է ապահովութիւն։ Փէրիկ փաշայի հեռանալուց յետոյ Սօվուջ-Բուլաղից, օսմանեան զօրքն էս հեռացաւ իր թնդանօթներով և քաղաքում մնաց միայն 300 հոգի ասկեար մի մինբաշու հետ։ Այժմ պարզվել է, որ օսմանեան զօրքը Սօվուջ-Բուլաղում բնակած ժամանակ իրանց յատկացված տների դռները, պատուհանները և գերանները քանդելով այրել են և առհասարակ նիւթական մեծ վնաս պատճառել»։

—

Ուրմիայից հեռագրում են, որ փետրվարի 23-ին Փարման-Փարման գնդապետ Խադիր-խանին կօզակներով ուղարկեց Սօվուջ-Բուլաղ, հրամայելով քշել այնտեղ մնացած թիւրքաց զինուորներին։(«Յ.»)

—

Վիեննա.—«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պոլսից, որ, համաձայն գենդարմերիի հաղորդագրութեան, արդէն կազմված է մի յատուկ գումարտակ՝ հրոսակախմբերին հալածելու համար։ Մտադրութիւն կայ կազմակերպել 120 թուրքի խմբեր, իւրաքանչիւրը 25—30 հոգուց բաղկացած, օֆիցերների ղեկավարութեան տակ։ Պահեստի զինւորները ստանում են առատ ռոճիկներ։ 1905 թւի հրահանգը, որով կարգադրվում է կռիւ մղել հրոսակախմբային շարժման դէմ, ներկայումս յրացված է մի որոշումով, որի համաձայն ժանդարմերիան և ոստիկանութիւնը գործելու են զօրքերի հետ ձեռք-ձեռքի տուած։ Հրոսակախմբերին անտես առնողները խիստ պատժի են ենթարկվելու։

ՄԱՀԱՐՁԱՆ ԱՐՓԻԱՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ

«Մշակի» երէկվայ համարում տպված Կահիրէի նամակից մեր ընթերցողները տեղեկացան, որ Եգիպտոսի հայերի մէջ հանգանակութիւն է բացված Արփիար Արփիարեանի գերեզմանի վրա մահարձան կանգնեցնելու համար։

Մենք յուսով ենք, որ Արփիարի յիշատակը բազմաթիւ յարգողները իրանց լումաներով կը մասնակցեն հանրային հանգանակութեան և միջոց կը տան եգիպտահայերին կարճ ժամանակում պատրաստելու և դնելու յարգանքի մահարձանը նշանաւոր հայ գրականագէտի վաղաժամ գերեզմանի վրա։

«Մշակի» խմբագրութիւնը իր կողմից յատկացնում է այդ նպատակով հարիւր ֆրանկ։

ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Թիւրքաց Հայաստանի հայ սովեալներին օգնելու համար հաստատված Հանգանակիչ Մասնաժողովը ստացել է պաշտօնական տեղեկութիւններ Հայաստանի հայ ժողովրդի տառապեալ դրութեան մասին։ Այդ տեղեկութիւնները քաղուածներ են Կ. Պոլսի պատրիարքարանում ստացված գրութիւններից, որ առաջ ենք բերում։

* * *

Առաջնորդարաններէ հետզհետէ պատրիարքարան հասած գրութեանց ժողովածու

1) Մուշի առաջնորդական փոխանորդը կը գրէ նոյեմբեր 10 թուականաւ. «Ժողովրդեան տարապայման չքաւորութեան, լուծքէ, ապրուստէ զուրկ վիճակի մասին յաճախ գրած ենք. ցաւալի է, որ պատահարներ շատ վնասակար եղան աշխատասէր ու հողագործ գիւղացիներու, որոնց շատերը ապրուստի դիւրութիւններէ զրկուած՝ բարիպունեցան տուն-տեղ լքել և ասդին-անդին ցրուիլ. շատ որբեր, այրիներ երեսի վրայ մնացին ու դառն չքաւորութեան մէջ կը հեծեն։ Սովի վտանգը կայ։ Բազմաթիւ գիւղերէ աղքատներ հաց կուզեն, ապրուստ կուզեն, և մենք շուարած ենք թէ ինչ ընել կարող ենք։ Կը խնդրենք ձեր բարերար օժանդակութիւնը»։

2) Դարձեալ Մուշի առաջն. փոխանորդը եւ կրօն. ու քաղ. ժողովները կը գրեն դեկտ. 10 թուականաւ. «Կարօտութիւնը երթալով կաճի, ձմեռն ու ցուրտերն անտանելի կընեն զայն. անօթութենէ մեռնողներու ձայներ կը լսուին, ու աղքատները կը շարունակեն խուռներամ դիմել, լալ, թախանձել. նոյնիսկ առաջնորդարանի դուռը անսուաղ ինկողներ կան. ասոնց մեծամասնութիւնն որբեր և այրիներ են. առաջնորդարանի միջոցները սպառած են կարօտեալները մխիթարելու, ուստի ստիպուած կը խնդրենք, որ ձեր գթութիւնն անպակաս ընէք մեր բիւրաւոր աղքատաց վրայ»։

3) Վանայ առաջն. տեղապահը եւ քաղ. ժողովը կը գրեն 1907 նոյեմբեր 26 թուականաւ. «Ձմեռը վրայ հասած ըլլալով՝ կարօտ ժողովրդեան վիճակն աւելի դառնացած է. հացի տագնապը հետզհետէ կը շեշտուի. ցորենի չափի գինը (իբր 50 հօխա) արդէն 100 ղրուշի հասած է, մինչ անցեալ տարի այս օրերը 60—65 ղրուշ էր, և կարօտ ժողովուրդը չափէն աւելի կը նեղուի, մանաւանդ գիւղերու մէջ, ուր հացը կը պակսի տակաւ և գիւղացիներ այժմէն իսկ անսովոր բաներով սկսած են լեցնել պարապ ստամոքսնին, ինչպէս խոտերու սերմեր, արմատներ, խաղողի կուտ և այլն։ Իսկ քաղաքիս մէջ բնակող քաղաքացի ու գաղթական կարօտեալք օրերով անսուաղ կանցունեն կամ սառած ու փտած բանջարներով կը սնանին, ինչպէս բողկ, շողգամ, ճակնդեղ, կաղամբ և այլն, այնպիսիներ՝ զորս բանջարանոցի տէրերը իբր անպիտան կը ձգեն։ Գիւղերէն ու հեռաւոր գաւառներէն հարիւրաւոր կարօտեալներ առաջնորդարան կը դիմեն նպաստի խնդրանօք, որոնց անկարող ենք գոհացուցիչ դարման մը տանիլ. ուստի կը խնդրենք արտասովոր միջոցներ ձեռք առնուլ, գթութեան կոչեր ուղղել և նպաստի նոր միջոցներ ընձեռել կարօտեալ ժողովրդեան»։

4) Դարձեալ Վանէն կը գրեն 1907 դեկտեմբեր 10 թուականաւ. «Թշուառութիւնն ու սովը օրըստօրէ աւելի կը սաստկանայ։ Հնձոց արդիւնքը այս տարի աւելի աննպաստ եղաւ, որով արժեքաց գինը այս տարի տարապայման բարձր է, քան նախորդ տարի։ Առաջնորդարանը պաշարուած է հաց խնդրող թշուառներու բազմութեամբ։ Անցեալ աշնան կարեւոր գումար մը յատկացուցինք գիւղացւոց սերմացուի պէտքին. նոյնը պիտի ընենք յառաջիկայ գարնան ալ, երբ միջոց ունենանք. ուստի կը խնդրենք նպաստ ընձեռել մեզ, յանուն թշուառութեան և ի հայթայթումն սերմացուի»։

5) Սսոյ կաթողիկոսը կը գրէ 1907 դեկտեմբեր 24 թուականաւ. «Կարօտութեան ձայները կը շատնան, այս անգամ ալ Զէյթունէն կը հասնի աւելի սրտակեղեք։ Այգիները, զէյթունցւոց ապրուստի միակ միջոցը, գարնան մեծաւ մասամբ փճացած են որթալուծէն. հացահատիկը սովորական գնոյն եռապատիկը բարձրացած է. պաճարախտը մեծ կոտորած ընելով զըրկած է հողագործը ապրուստի միակ նեցուկէն. այս ամենուն վրայ Պօղ-պայիր թաղը հրդեհ ծագելով 21 տուն այրացաւեր դարձուցած և ուրիշ տուներու և աղքատ ընտանիքներու վնասներ պատճառած է։ Տնտեսական այս արհաւրալից կացութեան մէջ ժողովուրդի առողջական վիճակն ալ յապահովելի չէ, մանաւանդ հարսանիթը մատաղ կեանքեր կը հնձէ. առաջնորդարանը շուարած է, զուրկ ըլլալով արկածեալները և սովեալները մխիթարելու միջոցներէն, ուստի պատրիարքարանի և ազգի գթութեան դիմում կընենք և նպաստ կը խնդրենք»։

6) Բաբերդի առաջն. տեղապահը կը գրէ 1907 դեկտեմբեր 27 թուականաւ. «Վիճակիս Խայէկ գիւղի արդէն իսկ աղքատ ժողովուրդը այս տարուան հունձքերուն նուազութեան պատճառաւ վերջին ծայր կարօտ վիճակի մէջ կը գտնուի։ Գիւղացիք իրենց այս վիճակին դարման տարուելու համար խմբովին առաջնորդարան դիմած են և նպաստ խնդրած՝ մինչև յառաջիկայ մարտ ապրելու համար։ Կը խնդրեմ որ շնորհ ընէք բացառիկ նպաստ մը ղրկել»։

7) Բայազիդի առաջն. տեղապահը 1907 նոյեմբեր 23 թուականաւ կը գրէ. «Գաղթականաց հասանքը չէ դադրած. ամէն օր բոկոտն, մերկ և նօթի այր և կին կը լեցուին Կարաքիլիսէ. տեղացիք իրենք ալ կարօտ են օգնութեան և հետևաբար չեն կարող հոգալ գաղթականները, որոնց թիւը 800-ի կը հասնի և որոնց մէջէն մէկ քանին անօթութենէ մեռած են։ Կը խնդրենք նպաստ հասցնել անմիջական կերպով»։

8) Մալաթիոյ առաջնորդը կը գրէ 1907 նոյեմբեր 20 թուականաւ. «Տեղւոյս հայ ժողովրդեան նիւթական արգահատելի վիճակը շատ անգամ նկարագրուած է. տագնապը տարուէ-տարի աւելի կը սաստկանայ. յաջորդական և իրար գերազանցող նեղութիւններ եկած ու անցած ըլլալով՝ ժողովուրդը վերջին ծայր թշուառութեան մատնուած են: Քաղաքիս 1500 տուն հայոց մէջ վաճառական, սեղանաւոր և հողատէր բնաւ չկան. մեծագոյն մասը խեղճուկ արհեստաւորներ են: Ներկայիս մէջ կրակի մը (8—9 հոխա) ցորենը 14—15 ղրուշի բարձրացած ըլլալուն պատճառաւ՝ ժողովրդեան 80%-ը ձմրան պաշար հայթայթելէ ձեռնթափ մնացած է, և եթէ դուրսէն նպաստի գումարներ չհասնին, ձմրան մէջ նօթութենէ մեռնողներ շատ պիտի ըլլան, վասն զի խեղճ ժողովրդին տան մէջ բան չէ մնացած»:

9) Տիվրիկի Խուռնավի գիւղի քաղ. խորհուրդը կը գրէ 1907 նոյեմբեր 30 թուականաւ. «Անօրինակ սով մը կը տիրէ գիւղիս մէջ իբր հետևանք ներկայ տարւոյ հունձքի արտակարգ նուազութեան. անկարելի է նկարագրել տիրող թշուառութիւնը, որ ժողովուրդն ի կորուստ կառաջնորդէ: Կը խնդրենք կարեկցիլ մեր այս վիճակին և նպաստի օգնութիւններ ընձեռել»:

10) Արմուքայեն կը գրեն դեկտ. 6 թուականաւ. «Քանի տարիէ ի վեր տնտեսական ձախողութեան բերմամբ ժողովուրդը աղքատութեան մատնուած է. չունի սերմնցու որ վարուցան ընէ, և 800 տուն ժողովուրդ օրէ-օր կը փճանայ: Օգնութիւն կը խնդրենք մերկ, բոկոտն և օրերով նօթի մնացող այս գիւղացւոց համար»:

11) Սեբաստիոյ Էքրէկ գիւղէն կը գրեն 1907 նոյեմբեր 24 թուականաւ. «Պատահարներէ այգիներ փճացած և կենդանիներ ոչնչացած լինելով՝ 300 տուոր ժողովուրդ չորաբեկ հայի կարօտ վիճակի մէջ ինկած է, մանաւանդ սրմտիքի գիներուն անօրինակ բարձրանալուն պատճառաւ: Սերմնցուի համար մասնաւոր օգնութիւն կը խնդրուի»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի նահանգի եւ Զախաթալայի շրջանի ժամ. գեներալ-նահանգապետի պարտադիր որոշումը

I) Արգելվում է մամուլում՝ սեփական թղթակիցների տեղեկութիւնների ձևով, կամ թէ այլ պարբերական հրատարակութիւններից ամբողջովին կամ կրճատ կերպով քաղելով՝ հաղորդել զանազան յեղափոխական կազմակերպութիւնների, անօրինականացրած ընկերակցութիւնների, կոմիտէների կամ նմանօրինակ ժողովների ու միութիւնների որոշումները և ռեզոլիւցիաները, որոնք թշնամական վերաբերմունք են առաջացնում ինչպէս դէպի կառավարութիւնը, այնպէս և դէպի հասարակական ու մասնաւոր հաստատութիւնները և անձերը:

II) Արգելվում է մամուլի միջոցով յայտարարել այն պաշտօնական անձանց ազգանունները, որոնք որևէ յանցաւոր գործողութիւն են յայտնագործում կամ չարագործներին ձերբակալում, ինչպէս և այն մասնաւոր անձերի ազգանունները, որոնք յիշեալ դէպքերում յանցաւորներին և յանցանքը երևան հանելու ժամանակ աջակցութիւն են ցոյց տալիս ոստիկանութեան:

III) Այս պարտադիր որոշումը խախտողները կենթարկվեն երեք ամսվայ բանտարկութեան կամ մօտ 3000 րուբլի դրամական տուգանքի:

Այս պարտադիր որոշումը իր ոյժի մէջ է մտնում նրա հրատարակութեան օրից:

Ստորագրեց՝ Թիֆլիսի նահանգի և Զաքաթալայի շրջանի ժամ. գեն.-նահանգապետ գեն.-մ. Րեաբինկին:

ԱՐՓԻԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վ. Թէքէեանի դամբանականը*)

Քանի մը անգամ միտքէս անցեր էր, ո՛վ Արփիար, որ ինծի պիտի իյնար հողվրտիքիդ վրայ խօսիլ, ո՛վ դուն որ այնքաններու հողվրտիքը գրեցիր և խնդալով կըսէիր որ դեռ շատերունը պիտի գրես: Չէիր կասկածեր, հաշուի չէիր առներ այն մահը որ ոչ թէ բնութենէն, այլ մարդոցմէ և մարդոց մէջ հայրենակիցներէ կուգայ, թէպէտ երկու անգամ այդ մահը մօտէն տեսեր էիր արդէն և վերջին երեք տարիներու միջոցին այդ միևնոյն մահուան զոհ իյնալը տեսար բազմաթիւ ազգակիցներուդ՝ Պոլիս, Վան, Կովկաս, Ամերիկա և Բուլղարիա: Ու դուն չվախցար այդ մահերէն ու ընդհակառակը, հետզհետէ աւելի խստութեամբ, զանոնք պատճառող ոգին դատապարտեցիր և զանոնք գործադրող մտքերն ու ձեռքերը հարուածեցիր: Շատերը, քու բարւոյդ համար, քեզ զգուշացնել ուզեցին այստեղ, քեզի խորհուրդ տուին հրաժարիլ այդ պայքարէն որ ամենէն ազնիւ ու ազգօգուտ պայքարն էր զոր ներկայ ժամանակիս մղել պէտք էր և զոր մղելով ոգի ի բռին, անդուլ, աննուաճ անվեհերօրէն և դիւցազնաբար՝ դուն վերջին մեծ ծառայութիւնը մատուցիր քու կեանքիդ, որ ծայրէ ի ծայր շարք մըն էր ազգիդ համար բնականօրէն, գրեթէ անգիտակցօրէն մատուցուած ծառայութիւններու: Եւ դուն, Արփիար, որ հերոս մը կոչուելէ կը վախնայիր, եղար իրական, ճշմարտապէս մեծ հերոս մը՝ որովհետև մահէն չվախցար ու խարանեցիր ոճրագործները, որովհետև՝ մահը չտեսնել ձևացուցիր ու կուրծքդ բաց կեցար, մէկ կողմէն կռուելով ու միւս կողմէն ժպտելով, ժպիտը շրթունքիդ վրայ ու պարսատիկը ափիդ մէջ:

* * *

Պարոններ, երէկ չէ առջի օր, ցերեկին, իր հետն էի ու գիշերը իր դիակը տեսայ: Ցաւը և զայրոյթը երկու կատաղի հոսանքներու պէս վրաս խուժեցին: Չգիտցայ թէ ո՞րը աւելի զօրաւոր էր՝ ցա՞ւը թէ ցասումը՝ որ ակռաներս կափկափել և ձեռքերս գալարել կուտար: Բայց աչքէս կաթիլ մը արցունք չելաւ և վճռեցի այստեղ իր վրէժը առնել և կուգամ երդուընցնել ձեզ, որ ամեն մէկերնիդ վրէժխնդիր ըլլաք իր մահուան համար, ո՛վ դուք ամէնքդ որ կը ճանչնայիք զինք, որ կը սիրէիք զինք, որ այդպէսով ձեր ազգը կը սիրէիք:

Արփիարին դիակին վրայ, եթէ իր բնական մահուամբը մեռած ըլլար, ցաւելու բազմաթիւ պատճառներ պիտի ունենայինք արդէն: Արփիարը այն մարդն էր, որ վերջին քսանըհինգ տարիներուն թիւրքահայ ամենէն կարևոր մշակը եղաւ, որ քաղաքակրթութիւն և ազատութեան զգացում ցանեց թիւրքահայ նոր սերունդներու հոգւոյն մէջ: Ի փոխարէն մահ հնձեց: Արփիար այն մարդն էր, որ անձնական հանգստութիւն, շահ, ընտանիք, սէր, ամեն ինչ զոհեց՝ միմիայն իր գաղափարներուն համեմատ իր ազգին ծառայելու համար: Ի փոխարէն մահ քաղեց: Արփիար այն տարօրինակ մարդն էր, որ կամչնար իր այս զոհողութիւնները խոստովանելէ, որ ինչպէս ամեն բան՝ զանոնք ալ ժպիտով մը կը քօղածածկէր, որ սկզբունք չունենալ կը կատակախօսէր և իր ամբողջ կեանքը, ընդհակառակը, ի սպաս դրաւ միակ սկզբունքի մը, իր ազգին համար ապրելու սկզբունքին, որը վերջերս ալ բնազդ մը, բնական պահանջ մը դարձեր էր իր մէջ: Եւ իր ազգը մահով վարձատրեց զինք: Արփիար գաղափարներ յուզեց, Արփիար զգացումներ փոթորկեց, Արփիար հայ ժողովուրդը թիւրք թշնամւոյն դէմ ոտք հանելու օգնեց և փոխանակ թիւրքին, որ եթէ զայն ձեռք անցընէր՝ յօժարակամ անոր արիւնը պիտի խմէր, որ անոր անունին սարսափը այնքան մեծ կը զգար, որ նոյնիսկ անոր անուանակիցները կը հալածէր,— փոխանակ թիւրքին, հայն էր, որ իր արիւնը խմեց: Արփիար անկաշառ, անշահախնդիր, անձնուէր հանրային գործիչը եղաւ, որուն վրայ միայն՝ այնքան երկար տարիներ, վստահեցաւ Արծրունին, այն, որ խելքի և խիղճի տիպարն եղաւ մեր մէջ և որ իր վստահութիւնը շռայլօրէն չէր բաշխեր: Բայց հանրային գործունէութեան մէջ Արծրունիէն ետք եկան ուրիշներ, որոնք այլապէս դատեցին զինք ու երեք անգամ մահուամբ ուզեցին պսակել իր ասպարէզը, որ, կը կրկնեմ, անպայման, անհաշիւ նուիրում մը եղաւ առ իր ազգը: Եւ ինչ ալ ըլլայ իր մասին՝ իրմէ տարբեր խառնուածքով ու տարբեր մտածումով մարդոց մինչև հիմա կազմած կարծիքը, վստահ եմ, որ, քիչ ժամանակ վերջը, անոնց մէջէն բոլոր խղճմիտներն ու խելացիները պիտի խոստովանին թէ, իր պակասութիւնները իր առաւելութիւններէն զեղջելէ ետք, Արփիար կը կանգնի շատ մեծ, շատ բարձր վերջին 30—35 տարիներու մեր ազգային կեանքին հորիզոնին վրայ, շատ բարձր իր ամեն դատափետիչներէն ու իրեն ժամանակակից այլահայ գործիչներէն:

Դուք ամէնքդ, հայրենակիցներ, որ զինք այստեղ իբրև «Լուսաբեր»ի խմբագիր ճանչցաք՝ գիտէք թէ ո՛վ էր Արփիարը, թէ ինչե՜ր ըրած էր ասկէ առաջ: Գիտէք թէ Հայաստանի մէջ բացուող առաջին դպրոցներուն հիմնադիրներէն էր, հիմնադիրը Արարատեան ընկերութեան որ ետքէն պիտի ձուլուէր ուրիշ ընկերութեանց հետ և պիտի կազմէր Միաց. Ընկեր.: Գիտէք թէ ազգ. ժողովոյ մէջ Արփիար եղաւ ամենէն կարմիր-ազատական երեսփոխանը, թէ 20 տարի շարունակ՝ եղաւ «Մշակ»ի Հայկակը որ ռուսահայերը թիւրքահայոց կապեց, եղաւ «Արևելք» Հրազդանը, թիւրքահայ միտքը Կովկասի վրայ բևեռեց, և Կովկասով՝ ազատականութեան ու ռամկավարութեան վրայ: Եղաւ «Մասիս» և «Հայրենիքի» խմբագրապետը, Պոլիս Հնչ. կուսակ. վարչութեան անդամը, և Լոնդոն՝ դարձեալ իր կուսակցութեան մէջ վարիչ մը: Հօս «Լուսաբեր»ին և «Շիրակ»ին վիճակուեցաւ իր գործունէութեան վերջին թարմ հետքերը կրել ու պահել, և, իմ մասիս, կսկծագին հպարտութեամբ մը կը խորհիմ թէ իր մահով՝ այժմէն Արփիար անմահացուց «Շիրակը»:

Պարոններ, Արփիարի գրական տաղանդը շատ մեծ էր և եթէ հանրային գործը զինք այնքան չգրաւէր՝ մատենագրութիւնը աւելի բազմաթիւ երկեր պիտի պահէր իրմէն: Ինչ որ կը ձգէ մեզի, տոկուն է և գեղեցիկ՝ ժայռերու պէս, զորս հրաբխային լեռ մը ցանուցեր իր շուրջը արձակեց:

* * *

Եւ հիմա, ո՛վ Արփիար, իմ մեծ, յարգելի ու սիրելի բարեկամս, ինծի ներէ որ կեանքըդ իմ սրտիս արիւնովը գրելէ ետք այնպէս, ինչպէս որ կըզգայի քու կենդանութեանդ ժամանակ, բայց որուն մէկ քառորդը կենդանութեանդ ինծի թող պիտի չտայիր զրուցել, ինծի ներէ որ դիակդ այսպէս կանգնեցնեմ ամբողջ հայութեան դիմաց ու հայութեան նայուածքը քու կեանքիդ ու մահուանդ վրայ դարձնելով, քու դիւցազնական դիակիդ շուրջ ջանամ համախմբել ամբողջ պարզ, միամիտ, ուղղամիտ մեր հայրենակիցները. զայն շինեմ պատնէշ մը, պատնէշ մեծագոյն եղեռնին, որ գործուած ըլլայ հայ ազգային կեանքին մէջ, ընդդէմ եղբայրասպան ոճրին, որ չի յագենար, ընդդէմ «Դրամաշորթ Խմբակին», որմէ եթէ փիզիքապէս սպաննուեցար՝ բարոյապէս դուն զայն սպաններ էիր արդէն:

Հանգիստ չեմ մաղթեր, Արփիար, ոսկորներուդ, այլ նոր կռիւ, նոր օգտակարութիւն, նոր ծառայութիւն՝ ապերախտ հայրենիքիդ:

*) Տես «Մշակ» № 43.

ԴԱՐՁԵԱԼ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Արփիար Արփիարեան)

III

Գում-Գափուի դէպքը շատ ցնցող տպաւորութիւն էր թողել Արփիարի ու իր ընկերների վրա և նրանք իսկոյն սկսել էին Պօլսում մեզ որոնել, որպէսզի այս անգամ ամենայն լրջութեամբ յարէն սկսված «գործին»: Մենք արդէն չը կայինք Պօլսում, և նրանք հարց ու փորձով տեղեկացել էին, որ ես Տրապիզոն եմ վերադարձել: Արփիարը որոշում է գալ իմ ետևից և միանգամ ևս տեսնվել ինձ հետ ու պաշտօնապէս կապվել «Հնչակեան կուսակցութեանը»: Չը նայելով որ, մինչ նրա Պօլսից դուրս գալը, Յակոբ Վարդպատրիկեանը Բաթումից արդէն այնտեղ էր հասել մեզ փոխարինելու համար և նոյնպէս տեսնվել էր Արփիարի հետ, բայց սա նրան մեծ կարևորութիւն չէր տուել և կամեցել էր անպայման «գըլխաւորների» հետ գործ ունենալ:

Թող ներվի ինձ այստեղ մի փոքրիկ շեղում անել ու մի քանի խօսք էլ Վարդպատրիկեանի (Վարդօ) ու նրա անցեալում կատարած դերի մասին ասել: Այդ ներելի է մանաւանդ այն տեսակէտով, որ թէև Արփիարն ու Վարդօն իրանց տեմպերամենտով ու բոլոր յատկութիւններով և ընդունակութիւններով միմեանցից բոլորովին տարբեր տիպեր ու անհատականութիւններ էին, բայց նրանք երկուսն էլ միևնոյն ճակատագիրը ունեցան, այն է՝ հէնց իրանց երէկվայ «ընկերների» ձեռքով: Այդ դեռ բաւական չէ. նրանց սպանելու շարժառիթներն էլ նոյնն են եղել. եղբայրասպանութեան այդ երկու զոհերն էլ յանդգնութիւն էին ունեցել մամուլի միջոցով հրապարակ հանելու իրանց երէկվայ ընկերների — Վարդօն դաշնակցականների, իսկ Արփիարը «վերակազմեալ» հնչակեանների — մի շարք այնպիսի խայտառակութիւններն ու զզուելի արարքները, որոնցից, ինչպէս ռամկօրէն ասում են, «ընկերների» ջանը դող էր ընկել: Եւ սրանք, աւելի մեծ ու աւելի խայտառակ մերկացումների առաջն առնելու համար, որոշեցին իրանց գլխից երէկվայ չեֆերի ու ամենաեռանդուն գործակիցների արևը խաւարեցնել:

Վարդօյի հետ առաջին անգամ ես ծանօթացայ Բաթումում 1889 թ. վերջերին, Տրապիզոն գնալիս: Նա այդտեղ պատրաստվում էր ուսուցչական ցենզի համար քննութիւն բռնելու: Տրապիզոն գնացող նաւը չը լինելու պատճառով, ստիպված էի աւելի քան մի շաբաթ Բաթում մնալու, և որովհետև գրպանս ինձ թոյլ չէր տալիս հիւրանոցում ապրել, ուստի սիրով ընդունեցի Վարդօյի առաջարկը՝ ապրել իր սենեակում: Նա ապրում էր իր ընկերոջ՝ Սիմէօն Նազիրեանի հետ: Երկու թախտ ունէին, որոնցից մէկը, իբրև հիւրի, յատկացրին ինձ, իսկ իրանք երկուսով միևնոյն նեղ թախտի վրա էին պառկում: Սենեակն էլ — Աստուած սենեակ համարի — թիւրքական տիրապետութեան ժամանակվանից մի շատ խարխուլ շէնք էր. յատակը բոլորովին մերկ, իսկ պատերն ու առաստաղը այն աստիճան խոնաւ, որ ջուրը աղբիւրի պէս վազում էր չորս կողմից:

Թէ Վարդպատրիկեանը և թէ Նազիրեանը հէնց առաջին անգամից շատ լաւ տպաւորութիւն թողեցին. երկուսն էլ շատ եռանդուն և «գործելու» տենչով լի, վառվռուն երիտասարդներ էին: Մտաւորական կողմից, սակայն, նրանք երկուսն էլ հաւասար ոյժեր չէին. Վարդօն շատ աւելի բարձր էր Սիմէօնից: Այնուամենայնիւ Վարդօն էլ մեծ պատրաստականութիւն ու պաշար չունէր, որպէսզի կարելի լինէր նրան նոր սկսվող յեղափոխական գործի մէջ մի որևէ պատասխանատու դեր տալ: Սակայն, այն ժամանակներում, յեղափոխական գործունէութեան անդաստանը այնչափ ամուլ էր ինտելիգենտ լաւ ոյժերից, որ մարդ ստիպված էր լինում ամենաթոյլ ոյժերի վրա էլ ուշադրութիւն դարձնել: Ինչպէս մի անգամ էլ առիթ եմ ունեցել ասելու, այն ժամանակվայ մեր ինտելիգենտ երիտասարդութիւնը իր ամբողջ ժամանակը անց էր կացնում սպիրիտիզմի միջոցով սեղաններ պտտեցնելով ու զուարճալի անեկդոտներ պատմելով: Իսկ երբ առաջարկութիւն եղաւ կազմակերպվել ու գնալ «Հայաստան գործելու», ինտելիգենտ երիտասարդներից և ոչ մէկը չուզեց տեղից շարժվել: Բայց տեղից չը շարժվելով հանդերձ, նրանցից և ոչ մէկը չը փորձեց անգամ համոզելու, որ այդ քայլը կամ արդէն շատ ուշացած քայլ է և կամ միանգամայն անմիտ է ու աղէտաբեր, որ մենք սխալվում ենք մեր ծրած հաշիւների ու ենթադրութիւնների մէջ այն մասին, թէ 90-ական թուականներում Հայաստանում կատարվելիք շարժումներն էլ կարող են ճիշտ այն արդիւնքն ու հետևանքները ունենալ, ինչ որ ունեցան 70-ական թւականների շարժումները Բուլղարիայում ու Սերբիայում, և այլն: Ոչ. այդպիսի խիստ էական խընդիրներ ոչ ոք չէր յարուցանում այն ժամանակներում. ընդհակառակը՝ բոլորն էլ առանձին նախանձով էին նայում «Հայաստան» գնալու պատրաստականութիւն յայտնողի վրա, իսկ գնացողին «հերոս» էին համարում:

Հէնց այդպիսի հերոսներ երևացին ինձ Վարդօն ու իր ընկեր Սիմէօնը, երբ Բաթումում յայտնեցին, որ մի քանի ամսից յետոյ իրանք էլ պիտի գան Տրապիզոն, «երկրի» աւելի ներսերը անցնելու համար:

Ճիշտ որ Սիմէօնը 3—4 ամսից յետոյ եկաւ Տրապիզոն և, ընկերանալով Մուշից եկած Ռ. Մ.-եանի հետ, գնաց Խարբերդ: Իսկ Վարդպատրիկը ուշացաւ:

Երբ Գում-Գափուի դէպքից յետոյ Բաթում վերադարձայ, նա արդէն պատրաստվել էր մի հայդուկային խմբի հետ Բայազէտի կողմերը գնալու:

Ես արգելք եղայ, համոզելով, որ նա հայդուկային գործունէութեան համար բոլորովին անպէտք է, ուստի աւելի լաւ է գնալ Պօլիս ու վարչական խորհրդի հետ այնտեղի գործերը վարել:

Հէնց այդ ժամանակ էր, որ Արփիարը տեսնվել էր Վարդօյի հետ:

Վարդօն Պօլսում երկար գործունէութիւն չունեցաւ. նա սկսել էր շատ յանդուգն ու համարձակ շարժվել, շուտով իր վրա էր դարձրել կառավարութեան ուշադրութիւնը ու ձերբակալվել էր: Նրան յանձնել էին ռուս կառավարութեանը, և նա աքսորեց 3 տարով Վեատկայի նահանգը: Աքսորից վերադառնալուց ու ոստիկանական հսկողութիւնից բոլորովին ազատվելուց յետոյ, 1895 թէ 96 թւականին նա նորից յեղ. գործունէութեան ասպարէզն էր նետվել, բայց այս անգամ Դաշնակցութեան շարքերը մտնելով: Այդտեղ էլ նա բաւականին ականաւոր տեղ էր բռնել և պատասխանատու պաշտօն էր ստանձնել: Միևնոյն ժամանակ նա սկսել էր իր սեփական հաշւով ու ռիսկով թերթ հրատարակել Վառնայում, «Շարժում» անունով: Ինչպէս յայտնի է, այդ թերթը Դաշնակցութեան կիսապաշտօնական օրգանն էր: Սակայն Վարդօն ինձ այդ բանը ուրացաւ, երբ ես նրան կրկին և վերջին անգամ տեսայ (1890 թւականներից յետոյ չէի տեսել նրան) Նոր-Նախիջևանում 1901 թւականին:

— Իմ թերթը բոլորովին չէզոք է,— ասաց նա ինձ:

Եւ որովհետև մինչ այդ ժամանակ ես «Շարժումը» չէի տեսել անգամ, ուստի իրաւունք չունէի կասկածելու նրա խօսքերին: Նամանաւանդ չէի կարող կասկածել, որովհետև նա ինձ ասաց.

— Եկել եմ Ռոստովում ու Նախիջևանում «Աբխազում աղաներ» գտնելու թերթիս համար:

Դա ցոյց էր տալիս, որ Դաշնակցութիւնը նրա թերթին ոչնչով չէր նպաստում:

— Ի՞նչ իմաստով ես դու թերթիդ անունը «Շարժում» դրել,— հարցրի ես նրան:

— Որովհետև նա թէ յետ է շարժվում, թէ առաջ,— պատասխանեց նա ծիծաղով:

Մօտ 10 օր մեզ մօտ մնալուց յետոյ Վարդօն գնաց Բուլղարիա և ես այլևս նրան չը տեսայ:

Դրանից յետոյ էր, որ առիթ և հնարաւորութիւն ունեցայ Վարդօյի «Շարժումը» կարդալու: Դա մի շատ ֆանատիկոս դաշնակցական թերթ էր, այն աստիճան ֆանատիկոս, որ, առանց խղճահարվելու, իր էջերում տեղ էր տալիս ամեն տեսակ անհեթեթութիւնների, միայն թէ կարելի լինէր հարուածել Դաշնակցութեան հակառակորդներին, ով էլ լինէին սրանք: «Շարժումը» կարդալով, ես աւելի ու աւելի համոզվում էի, որ Վարդօն բոլորովին զուրկ էր գրականական, մանաւանդ հրապարակախօսական ընդունակութիւններից: Միշտ այնպիսի տպաւորութիւն էի ստանում, որ Վարդօն պարզապէս թիւրիմացութեամբ էր գրականագէտ դառել, ինչպէս որ նոյնպէս թիւրիմացութեամբ Արփիարը յեղափոխական դարձաւ: Նրանք երկուսն էլ շեղվել էին իրանց բնածին ընդունակութիւնների ճանապարհներից և երկուսն էլ համանման եղանակներով կնքեցին իրանց մահկանացուն:

Խ.-Ազատ

Լ. ՏՈԼՍՏՈՅԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Ինչպէս յայտնի է, Պետերբուրգում կազմվել էր մի կոմիտէ Լ. Ն. Տոլստոյի ութսունամեայ յոբելեանը տօնելու համար: Այժմ այդ կոմիտէը մշակել է հետևեալ կոչը. «Այս տարվայ օգոստոսի 28-ին կը լրանայ կոմս Լ. Ն. Տոլստոյի 80 տարին: Առաջվան պէս մեծ իմաստունը յուզում է ամբողջ մարդկութեան սրտերը իր անդադար որոնումներով կեանքի միտքը: Մի ինչ-որ խորը և նշանակալից բան կայ այդ գեղեցիկ և պայծառ ծերութեան մէջ, այդ հոգեկան կորովի և ֆիզիքական կայտառութեան միութեան մէջ, և մեզ վրա, Տոլստոյի բարձր կեանքի վկաներիս վրա, առաջիկաների այն սերունդների շարքում, որոնց վիճակվել է ապրել նրա զօրեղ ստեղծագործութեան լոյսի մէջ, դրված է ուրախալից պարտականութիւն հանդիսապէս ընդգծել գրականութեան պատմութեան մէջ ամենահազւագիւտ յոբելեաններից մէկը: Տոլստոյի փառքը վաղուց արդէն անցել է նրա հայրենիքի սահմաններից դէնը: Վաղուց արդէն ամբողջ աշխարհը տենդային ուշադրութեամբ հետևում է նրա մեծ խղճմտանքի աշխատանքին: Աւելի պայծառ, քան որևէ մէկը, Տոլստոյը մարմնացրել է իր գործունէութեան մէջ մարդկութեան գաղափարը, որը կռիւ է մղում եռուն, յաւիտենական հարցերը լուծելու համար, և ահա թէ ինչու շատ բնական է այն միտքը, որ ռուս երկրի մեծ գրողի առաջիկայ տօնումը պէտք է լինի ոչ միայն համառուսական, այլ և համաշխարհային: Նախաձեռնող կոմիտէը իր մերձաւոր նպատակն է համարում այդ կոչն անել, որպէսզի հնարաւորութիւն տայ արձագանք տալու, և ապա ստեղծել արդէն ոչ թէ ժամանակաւոր, այլ մշտական կոմիտէ: Այդ կոմիտէի մէջ պէտք է մտնեն բոլոր երկիրների, գիտութեան բոլոր ճիւղերի, արուեստի և հասարակական կեանքի ներկայացուցիչները, ակադեմիական հիմնարկութիւնների, գիտական ընկերութիւնների, դաշնակցութիւնների, զանազան տեսակի կազմակերպութիւնների և բոլոր այլ համընկերակցութիւնների ներկայացուցիչները, որոնք միացած են սիրով դէպի մեծ գրողը, որը նուիրել է իր հանճարը մարդկութեան կատարելագործութեանը: Յոբելեանի տօնախմբութեանը մասնակցել ցանկացողների յայտարարութիւնները խնդրում ենք ուղղել նախաձեռնող կոմիտէի նախագահ պրոֆէսօր Մ. Մ. Կովալէվսկու անունով, Պետերբուրգ, Մօխովայա փող., տ. 32: Նախագահ Մ. Կովալէվսկի, նախագահի օգնական Կորոլէնկո, Ի. Է. Րէպին և քարտուղար Մ. Ա. Ստախովիչ»: («Р. Сл.»)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Հին-Նախիջևան, 24 փետրվարի

Այս ամիսը Հին-Նախիջևանի և իր շրջակայքի 1905 թ. հայ-թուրքական արհաւիրքների և կոտորածների քննութիւնների ու դատավճիռների սեզոնն էր: Երևանի նահանգական դատարանի անդամները Հին-Նախիջևանում մօտ մի ամսվայ ընթացքում շատ դատեր տեսան, ինչպէս օրինակ՝ Հ.-Նախիջևան քաղաքի, Հաջիվարի, Ջահուկի և այլն: Իսկ վերջին օրերս էլ մի քանի ուրիշ երկրորդական դատեր կայացան, որոնք անմիջական կապ ունէին հայ-թուրքական ընդհարումների հետ: Ինչպէս արդէն իր ժամանակին «Մշակին» հաղորդել ենք, Հին-Նախիջևան քաղաքի կոտորածների համար, շնորհիւ հայերի և թուրքերի փոխադարձ նպաստաւոր վկայութիւններին—բոլորն էլ արդար ճանաչվեցին: Ջահուկի վանդալական նախճիրների համար վերջապէս 22 թուրք 8 ամսվայ բանտարկութեան և 7 հոգի էլ 3 տարով տաժանակիր աշխատանքի դատապարտվեցին: Հաջիվարի գործը ժամանակաւորապէս յետաձգվեց: Իսկ վերջին դատերի ժամանակ, 1905 թ. լեռնային մասի խմբապետ, Ջան-բէգար (աւելացնում եմ՝ և յայտնի աւազակ) գէշլուեցի քեալբալայի Թէմիրը և իր ընկերը (կարծեմ Հասան անունով) 10 տարվայ տաժանակիր աշխատանքի դատապարտվեցին: Նա մեղադրվում էր միաժամանակ մի քանի սոսկալի ոճրագործութիւնների մէջ: Դեռ 1905 թ. առաջ նա իր աւազակ շայկայով սրախողխող էր արել մահմադ-Թաւեցի Հաջիի (թուրք) ամբողջ ընտանիքը: 1905 թ. աղէտներից յետոյ, նա էր եղել, որ յարձակվելով ռուս զինւորների վրա՝ նրանցից մէկին սպանում և երկուսից զէնքեր է խլում: Վերջապէս նա էր 1906 թ. Ագուլիսից դէպի Շուռութ հայկական գիւղը ուղևորվող նորապսակ ամուսիններին՝ սրանց ուղեկցող 2 հայի հետ կտոր-կտոր անողը և նորահարսին բռնաբարողը…

Բ. դատը հայկական Ղազանչի գիւղացիների դատն էր, որոնք գիշեր ժամանակ թագուն կերպով գիւղական դատարանի լուսամուտներից ներս մտնելով, սպանել են այն 3 ժողովական թուրքերին (որոնք հէնց մի ղազանչեցու սպանման համար էին բանտարկվել), որոնց շրջանի պրիստաւը ձերբակալել և բանտարկել էր տուել գիւղական դատարանում: Դատի էին ենթարկված 4 ղազանչեցի, որոնցից 2-ը արդար ճանաչվելով, 2-ն էլ 3 տ. տաժանակիր աշխատանքի դատապարտվեցին:

Գ. դատը 1906 թ. Շըխմահմուդ հայկական գիւղում տեղի ունեցած դաշնակ-հնչակ աստառ կրող քստմնելի եղբայրասպան ընդհարումի դատն էր: Բաւական չէր, որ մի քանի բարոյապէս ընկած, տգէտ ու շահամոլ չակերտաւոր յեղափոխականներ, իրանց անձնական նեղ ու գծուծ շահերին հասարակական բնոյթ տալով շահագործում էին միանգամայն անմեղ զինւորների ազնւութիւնն ու համբերութիւնը,—մի գեղեցիկ օր էլ յանկարծ, դաշնակ-հնչակ աստառների տակ, յիշեալ գիւղումը զինված ընդհարում է առաջ գալիս երկու կուսակցութեան պատկանող զին-

ւորների միջև, որի ժամանակ սպանվում է մի հնչակեան զինուոր և երկուսն էլ վիրաւորվում են։ Վիրաւորվածներից մէկը և մի ուրիշ բոլորովին անմեղ անձնաւորութիւն խըլխանութեան ձեռքն են անցնում և բանտարկվում։ Ահա այդ 2 անձնաւորութիւնները դատապարտվեցին 4 տարի տաժանակիր աշխատանքի։ Նախկին յեղափոխական մի պարոն, որի անձնական շահերի համար առաջ է գալիս այդ ցաւալի ընդհարումը, առանց մազաչափ խղճի խայթ զգալու, դէպքից մի տարի անցնելուց յետոյ, էլի չը բարեհաճեց նպաստաւոր վկայութիւն տալ, գոնէ այն անմեղ դատապարտվածին։

Ահրիմանեան

—

Կովկասեան զինուորական - նահանգական դատարանին է յանձնված Քութայիսի գաւառի բնակիչ Լավրենտի Րօբաքիձէ, որ մեղադրվում է այն բանում, որ 1908 թ. յունվարի 22-ին, նախօրօք մտադրվելով կեանքից զրկել Բաթումի բանտում միասին բանտարկված Լէօնիդ Զաշկէվիչին, դանակով մի քանի վէրքեր հասցրեց փորից և կրծքից, որից Զաշկէվիչը մեռաւ։

—

Փետրվարի 25-ին Թիֆլիսի դատաստանական պալատի յատուկ ատեանը դասակարգային ներկայացուցիչների հետ միասին քննեց վրաց «Ախալի Քվէգանա» լրագրի խմբագիր Չէլիձվիլու գործը։ Ինչպէս յայտնի է, Չէլիձվիլին մեղադրվում է «Ինչի մէջն է ժամանակաւոր հանգստութեան պատճառը» խորագիրը կրող յօդուածը տպագրելու մէջ։

Պալատը Չէլիձվիլուն մեղաւոր ճանաչեց քրէական պատժագրքի 129-րդ յօդուածով և դատապարտեց նրան միամեայ բանտարկութեան։

ՍՈՎԸ ՂԱԶԱԽԻ ԳԱՒԱՌՈՒՄ

—

Ղազախ, 15 փետրվարի

Կառավարութեան տալիք նպաստի ձայնն է, որ լսւցրել է մեր գիւղացուն, որը, քարից փափուկ ամեն կարելի բան ուտելուց յետոյ, ջղաձգօրէն օրհասական կռիւ է մղում այդ սոսկալի հրէշի դէմ և ժամից-ժամ, օրից-օր, շաբաթից-շաբաթ... սպասում խոստացված նպաստին, որը սակայն ամիսներ է տեւում և ով գիտէ թէ դեռ երբ է լինելու։

Հեռագիրներ, նամակներ, պատգամաւորութիւն, կօմիսիա, փող, թղթուկ, աղմուկ ու աղաղակ, սակայն մէջտեղ ոչինչ չը կայ. այս աղմուկներին են խառնվել և սովեալների աղեկտուր ձայները և շշմացրել մեզ, գիտակցող՝ բայց ձեռքերից ոչինչ չեկող՝ գաւառում ապրողներիս։

Որքան էլ հաստատ ու ցերեկվայ արեւի լոյսի պէս պարզ է որ հայկական (լեռնային) բոլոր գիւղերում անխտիր հացի սաստիկ կարիք կայ, դարձեալ լսում ենք, որ Ղազախի գաւառի (կառավարութեան նշանակած) կօմիսեան կարիքաւորների ցուցակից հանել է 20-ից աւելի հէնց միայն հայ գիւղեր։ Զարմանալին դեռ այդ չէ, այլ այն, որ ասում են թէ՝ ցուցակից դուրս է մնացած մինչև անգամ Կոչկն գիւղը. այդ ամենքիս քաջ յայտնի այն գիւղն է, որ Կուր գետի ափին, թուրք գիւղերով շրջապատված, ընդհարումների ժամանակ հիմնայատակ կործանվեց և երեք տարի շարունակ իր վարն ու ցանքը չէ ունեցել։ Խեղճերը այսօր մարդիկ էին վազեցրել Ղազախ քաղաք, որ նորից բողոքեն, նորից լաց լինեն իրանց գլուխները... Եւ քանի՛-քանի գիւղեր նորանոր խնդիրներով նոր կօմիսիա են պահանջել նահանգապետից։

Մնում է նորից համբերել, նորից սպասել, նորից յուսալ... յուսալ անվերջ, սպասել և յուսալ՝ ով գիտէ մինչև նոր հունձը։ Ա՜խ, ինչքա՜ն սառն են վարվում առհասարակ կուշտ մարդիկ քաղցածների վերաբերմամբ. խեղճ քաղցածները ամեն օր, ամեն րոպէ, ամեն քայլափոխում առաջներս կտրում են և «մի խաբար» հարցնում. նրանք համարեա ամենքը դալկացած, մաշված, ծիւրված, հատած ու հանգած են. երբեմն հազիւ է կարելի լինում ճանաչել նրանց նախկին ծանօթ դէմքը. և ինչե՜ր չեն պատմում իրանց կանանց ու երեխանց «հալից». նախկին տարիների՝ ամենքի առջեւ սովորական հացը այլեւս չը կայ, որ լացող երեխային ձեռքին դնեն, լռեցնեն. ընկեր-հարեւանումն էլ չէ հաց մնացել, հացփոխն էլ է վերացել. և ո՞ր մէկին հացփոխ տաս, մինչև երբ...

Ամենքիս յայտնի է, որ քանի մեր գիւղերում ուսումը պարտադիր ու ձրի չէ, ուստի և համեմատաբար աւելի բաղդաւորների զաւակներին է մատչելի դպրոցը. սրան կաւելացնենք և այն, որ աւելի բաղդաւոր գիւղերն ունեն ուսումնարան. Թէև, պէտք է խոստովանած, այդ էլ մի ուսումնարաններ չեն, որ մեր գիւղերումը կան. մարդախաբիչ բաներ են, հազիւ մի կերպ շունչ ու կենդանութիւն պահող։

Այդպիսի գիւղերից մէկն է Ուզունթալան, որը կօմիսիայի ցուցակից դուրս է մնացած. բայց ահա թէ ինչ է գրում այդ գիւղի ուսուցիչ պ. Ռոստոմեանը. «Տեսնում եմ աշակերտներից մէկը տատանվելով, դժգոյն, դալկացած, աչքերը խոր ընկած, գլուխը ուսերի վրա պահել չէ կարողանում... Մօտենում, հարցնում եմ. ասում է սոված եմ. քանից երեւում է, որ մի քանի օր է հացի երես չէ տեսել. ձեռքից բռնում սենեակս եմ տանում. Նա ապշած նայում է երեսիս, կարծես չէ հաւատում, որ հաց կը տամ. երբ իմ ունեցածից բաժին եմ հանում նրան, նա հեկեկում է ողբալի ձայնով. հեկեկում եմ և ես... սրտաճմլիկ տեսարան. և օրական մի քանի այսպիսի դէպք. աղջկները կորատվում են, սիրտս մորմոքվում. երանի հնար լինի այս գիւղից հեռանալու։ Մի երեխայ, Գ. Ա...ն անունով. մի քանի օր հիւանդ էր եղել քաղցածութիւնից, և երբ հարեւանները մի քանի կտոր հաց էին տըւել, նա կազդուրվել էր և այսօր դպրոց եկել. երբ ես նրան հարցրի, հաց ունի՞ թէ ոչ, նա ամօթից լաց եղաւ. խեղճն երեխաներին խնդրեցի և մի-մի կտոր հաց տուեին։ Մի ուրիշին, երբ սենեակս տարայ հաց տալու, նա թէև քաղցած էր, բայց ինքնասիրութիւնը թոյլ չը տուեց հացը ձեռքից առնելու և այնպէս էլ մնաց քաղցած։ Տէր հայր, գիտեմ որ դուք կը զգաք իմ հոգեկան տանջանքս և կը հասկանաք դրութիւնս... Մի խօսքով զարհուրելի է. ոչ ոք ոչինչ չունի որ միւսներին օգնէ. ծախելու էլ բան չէ մնացել։ Ո՞րտեղից պիտի սրանց օգնութիւն հասնի, երբ մեր կեանքում յունվարին եկած ձիւնը մաքրելու կարգադրութիւնը օգոստոսին է արձակվում...»։

Այս հարիւրաւոր նամակներից դեռ մէկն է, որ գալիս է մեզ հետ խօսելու կարիքի աշխարհից։ Քանի՛-քանի լուռ ու մունջ դարդեր կան ամբարված անմռունչ ու անգրիչ թշուառների լանջերում, որոնք մեղմաբար կրծելով նրանց սրտերը՝ փութացնում են վերջին օրը։

Զաքարիա ք. Ապրեսեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Մօցարտի յիշատակին

Գեղարուեստական մեծ հաճոյք պատճառեց Մօցարտի յիշատակին նուիրված երաժշտական այն երեկոյթը, որ տուեց փետրվարի 23-ին երաժշտասէրների ընկերութիւնը։

Երեկոյթը կրում էր ընտանեկան բնաւորութիւն։ Մասնակցում էին ընկերութեան անդամները և մի քանի հիւրեր։

Համերգը կազմված էր բացառապէս Մօցարտի հեղինակութիւններից։ Իբրև նմուշներ հանդէս էին բերված անհատական և խմբական նուագածութիւններ, օպերաներից կտորներ։

Գեղեցիկ կատարվեց քառանուագ Խադուրը։ Մանաւանդ տպաւորիչ էր նրա երկրորդ մասը. նրա մէջ կային խորութիւն, զգացմունք, տրամադրութիւն և խելացի արտայայտութիւն։ Կատարողներն էին Վասիլեվ, Գրօսման, Տէր-Օհանեան և Ցեդելեր։

Ջութակահար Վասիլեվ առանձին նուագեց «Մինուէտտօ» մեծ հմտութեամբ և նրբութեամբ։ Դա բարդ գրուածք չէ և կարող էր սովորական դիւրըմբռնելի եղանակներից մէկը համարվել, որոնք չափազանց յայտնի են հասարակութեան, բայց հմուտ նուագածութիւնը հէնց այն բանի մէջն է, որ երաժշտութիւնը արտայայտվի այն գեղարուեստական գեղեցկութեամբ, որով ներշնչված է եղել հեղինակը։

Խոր տպաւորութիւն թողեց տասներեքերորդ սօնատայի «Ադաժիօն», որ նուագեց դաշնակահար Մասլօվսկին։ Նա գողտրիկ է, խօսում է սրտի թելերից և շօշափում է հոգեկան տրամադրութիւններ, որոնք երկար ժամանակ չեն մոռացվում։ Մասլօվսկին վերջում նուագեց «Ա-լա-Թիւրքա» մեծ աշխոյժով։

Օպերայի նմուշները վերցված էին «Ֆիգարօյի հարսանիքից» և «Դօն-Ժուանից»։ Տիկիններ Պրեսնինսկայա և Վասիլեվա արտայայտիչ ու զգացված կերպով և խելացի ամփոփումներով երգեցին դուէտներում Ցխօմելիձէի հետ, որը երգեց և առանձին։ Ցխօմելիձէն տպաւորիչ էր առանձին օպերայի կտորում։

Երաժշտական երեկոյթը ներշնչելով Մօցարտի գրուածքներով յատուկ գեղարուեստական տրամադրութիւն, մի անգամ ևս փոխադրեց հանդիսականների ուշադրութիւնը դէպի այն զգացմունքների ձայների աշխարհը, որոնցով ապրում էր նշանաւոր երաժշտագէտը։

Սերող

—

Բագու, 21 փետրվարի

Փետրվարի 18-ին հայ դերասանական խումբը Թաղիեվի թատրօնում դերասան Ալիխանեանի բենեֆիսին ներկայացրեց Կօնան Դէյլիի «Շերլօկ Հօլմս» կօմեդիան չորս արարուածով.

Պիէսան իր ցնցող տեսարաններով ու արկածալի բովանդակութեամբ մեծ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա. դահլիճը լարված ուշադրութեամբ հետեւում էր դերասանների խաղին։ Չը նայելով դրան՝ պէտք է նկատել, որ այդ պիէսան ներկայացված հիւսուածքով որքան էլ ուժեղ է իր տպաւորութեամբ, այնուամենայնիւ, ունկնդիրների ջիղերը ցնցելուց բացի, էսթետիքական և կրթական ոչինչ չէ ներկայացնում։

Ալիխանեանը Շերլօկ Հօլմսի պատասխանատու դերը մինչև վերջն էլ տարաւ մեծ աջողութեամբ։ Մարդկութեան շահերի համար անձնուրաց այդ արտակարգ տիպի վրեժառականութիւնն ու ճարպիկութիւնը նա պատկերացրեց բեմի վրա չափազանց ցայտուն կերպով, և եթէ դրան միացած լինէր փոքր ինչ աւելի մտահոգութիւն և համապատասխան միմիկա, որ բնորոշ յատկանիշն է այդ տիպի, կարելի էր առանց վարանելու ասել, որ նա ստեղծված է հէնց այդ դերի համար։

Երկրորդ ոչ պակաս պատասխանատու դերը դօկտոր Մօրիսի դերն էր, որը կատարում էր Սեւումեան։ Նրա խաղը մտածված էր ու համարձակ, բայց պակասում էր աշխուժութիւնը։ Չը նայելով դրան՝ Մօրիսի հակակրելի ու չարասիրտ տիպը նա, շնորհիւ իր արտաքինի, գրիմի ու հոգեկան ալեկոծումները պատկերացնող շարժումների, կարողացաւ բաւականին աջող կերպով ներկայացնել։

Օր. Մելիք-Շահնազարեան լաւ էր տիկին Պարբսի դերում։ Աջող տարաւ օր. Արուսեակը լեդի-Կատոգանի դերը։

Միւս դերակատարները բաւարար էին։

Ընդհանրապէս խաղը լաւ անցաւ և մեծ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա։ Բենեֆիցիանտը արժանացաւ բուռն ծափահարութիւնների։

Սակայն եթէ ուշադրութեան առնենք այն, որ այդ ծափահարութիւնները վարձատրութիւն լինին դերասանի այդօրվայ գեղեցիկ և տաղանդաւոր խաղին, ուրեմն բենեֆիցիանտը մնաց առանց խրախոյսի։

Ո՞ւր էին այդ երեկոյ հայ հասարակութեան բարձր խաւերը. պարահանդէսներում, թէ՞ բալէտներում։

Գոնէ այդ փոքրիկ թատրօնի առաջին շարքերն էլ բռնված լինէին։

Աշխատակից

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Զաքաթալա, 22 փետրվարի

Փետրվարի 21-ին, Վարդանանց տօնի օրը, տեղիս եկեղեցում հանդիսաւոր պատարագ կատարվեց։ Պատարագից յետոյ ծխատէր Մկրտիչ քահ. Տէր-Մկրտչեանն աւուր պատշաճի քարոզ խօսեց։ Ապա եկեղեցու շինութեան մէջ տեղի ունեցաւ օրվայ առիթով հանդէս, որին ներկայ էր Զաքաթալայի գեղեցիկ սեռը միայն, եթէ չը հաշւենք մի ջուխտ ու կէնտ տղամարդիկը... Հայոց դպրոցի փոքրիկ աշակերտուհիները շնորհալի կերպով արտասանեցին մի քանի ոտանաւորներ ու երգեցին ազգային երգեր։

Նոյն օրը երեկոյեան ծխական դպրոցի դահլիճում տեղական սիրողները խաղացին յօգուտ տեղիս հայոց երկսեռ դպրոցի՝ Ց. Կարինեանի «Շուշանիկը» և Տէր-Գրիգորեանի «Սիրահարը սեղանի տակ» վօդեւիլը։ Սիրողների մէջ իրանց բարեխիղճ խաղով աչքի ընկան Խաչատրեան ամուսինները, տ. Հայրապետեանը և պ. Յովհաննիսեան։

Մուտքը բաւարար է։

Ի դէպ. հանդիսականները ներկայացման ընթացքում իրանց շատ վատ էին պահում, ծխում, հռհռում, ծիծաղում ու այդպիսով փչացնելով խաղի էֆֆեկտը։

Տեղացի

—

Երեւան, 21 փետրվարի

Վարդանանց տօնը, իբրև ազգային տօն, մեզանում կատարվում է սովորաբար ընդհանուրի կողմից։ Նախորդ տարիների նման այս անգամ էլ հայ վաճառականներն իրանց խանութները փակել էին և իրանց գործակատարներին հնարաւորութիւն տուել ազատօրէն տօնելու ամենքիս սրտին մօտիկ այդ մեծ տօնը։

Ժամը մօտ 12-ին քաղաքի վաճառականները, արհեստաւորները և թէ երկսեռ բազմաթիւ հասարակութիւնը սկսեցին խումբ-խումբ դիմել Թեմական դպրոց՝ Վարդանանց տօնի առիթով լինելիք հանդէսին հանդիսատես լինելու։ Սովորաբար ուրիշ տարիներ այս տօնական հանդէսը մեզանում կատարվում էր շատ շքեղ, այս տարի խիստ անշուք անցաւ, որովհետև, ինչպէս երեւում է, դպրոցի վարչութիւնը ոչ մի հոգ չէր տարել այդ առիթով։

Ժողովրդի ահագին բազմութեան և եղած պահանջի պատճառով տեսուչ Աղամալեանցը կարգադրեց հանդէսը բացօդեայ՝ դպրոցի բակում կատարել։ Հոգաբարձուներից բժ. Մելիքեանը կարդաց հոգաբարձական գործունէութեան անցած տարվայ հաշիւը, որը կազմված էր ստատիստիկական ձեւով։ Հոգաբարձուն յայտնեց, թէ այդ հաշիւը շուտով տպագրութեան կը յանձնվի։

Հոգաբարձուի հաշւետւութեանը հետեւեց անցեալ ուսումնական տարվայ մասին տեսչի կազմած հաշիւը, որի ընթերցումը տեւեց մի ժամից աւելի։

Այնուհետև աշակերտները սկսեցին իրանց սովորական ոտանաւորներն ու երգերը։ Հանդէսի վերջում, դպրոցի վարչութեան խնդրանքով, օրվայ առիթով խօսեց ուսուցիչ Բուշմանեանը, որը բաւականութիւն տուեց հասարակութեանը։

Մոռացանք յիշելու, որ հանդէսից առաջ հոգեհանգիստ կատարվեց դպրոցի բարեբար Ն. Թայիրեանի գերեզմանի վրա։

Գ. Աղաղաղեան

—

Խանքենդ-աւան, 18 փետրվարի

Անցեալ տարվայ հոկտեմբեր ամսի երկրորդ կէսում, Ղարաբաղում, անսպասելի կերպով տեղաց առատ ձիւն։

Այդ անսպասելի ձիւնը սարսափի տակ ձգեց գիւղացիութեան, որովհետև նախ՝ դեռ սերմը չէր ձգված և երկրորդ՝ անասունների համար խոտ և գարման չը կար։ Շատ գիւղացիներ այդ սարսափից հարկադրված փութացին իրանց անասունները վաճառել մսագործներին։ Բայց այդ սարսափին հետևեց հիասթափութիւնը։ Հոկտեմբերի ձիւնից յետոյ երկար ժամանակ այլ ևս ձիւն չեկաւ, այնպէս որ եղածը մի քանի օրից յետոյ հալվեց։ Այժմ օրերը աւելի տաքացել են, հողը փափկացել է, ժանիշակը բուսել՝ երեխաները փնջեր են կապում, ուրեմն և անասունների համար ապրուստը բաւական թեթեւացել և սովի երկիւղն անցել է։

Հոկտեմբերի ձիւնը հալվելով՝ գիւղացին կարողացաւ նոյեմբեր ամսում նորից լծել իր արօրը և սերմը ձգել։ Ձգած սերմը հիանալի կերպով աճել է։ Այժմ էլ օրերը երկարացած և տաքացած լինելով՝ արդէն ձգում են գարնան հացահատիկները։ Եթէ այս տարի բնութեան որևէ պատահար չը լինի, առատ հունձ է խոստացվում։

Հացի պակասութեան սարսափը, որ տեղի ունեցաւ անցեալ սեպտեմբեր ամսում և ցորենի ու ալիւրի գինը զգալի կերպով բարձրացրեց, անցնելու վրա է։ Աղդամի, Խոնաշէնի, Կարաբուլաղի տօնավաճառ - բազարներում ցորեն, գարի, կորեկ բաւական կան. ցորենի գինը կանգնած է մի գնի վրա, իսկ գարունը և կորեկինը բաւական իջել է։ Գարին առաջ ծախվում էր պուտը 1 ռուբլի 10 կոպէկով, իսկ այժմ իջել է 75, 80 և 85 կոպէկի։

Ռուսաստանից գիւղերն են բերվում ցորեն և ալիւր. ցորենը միջակ տեսակից, իսկ ալիւրը վատ։ Գիւղացիութիւնը ապաւած նեղութիւններից ազատ է համարվում։ Հաց քիչ մասն ունի, մի մասը փողով առնում է, իսկ երրորդ մասը, արդարև, ծանր օրեր է քաշում։ Հաց չունենն, փող չունենն, պարտք տուող էլ չը կայ։ Սրանք սաստիկ վատ են անցկացնում օրերը, երբեմն խնձորով, երբեմն գետնախնձորով և շատ անգամ սոված։ Այս չարչարանքներին աւելացել է և մի ուրիշը։ Դիզակի և Վարանդայի գիւղացիներից տասը մի մարդ տարել են և Աղդամից դէպի Հադրութ գնացող ճանապարհի վրա բանեցնում։

**

—

Լագօդեղ, 21 փետրվարի

Այսօր այստեղ կատարվեց հայոց եկեղեցում հանդիսաւոր պատարագ ի յիշատակ Վարդանանց տօնի։ Բագրատ քահ. Սուքիասեան ճառ խօսեց, հասկացնելով տօնի նշանակութիւնը։ Ապա հանդէս կատարվեց դպրոցում, ուր ուսուցիչ Յ. Գրիգորեան արտասանեց նոյնպէս մի ճառ։

X.

—

Սամարղանդ, 18 փետրվարի

Փետրվարի 17-ին մեր աղօթատանը նշանակված էր ծխական երկրորդ ժողով։ Ներկայ էին օրինական թւից աւելի ծխականներ. տիկնայք՝ բառիս բուն նշանակութեամբ՝ բացակայում էին։ Ժողովի հերթական հարցերն էին. ա) ծխական տուրք սահմանել դպրոցի օգտին, բ) դպրոցի նոր շէնք կառուցանելու հարցը և գ) եթէ պատրաստ լինէր աղօթատան հաշիւը՝ նա ևս ստուգել։ (Առաջին ժողովին այդ բանի համար ընտրվել էին 3 հոգի)։

Հերթական հարցերի համեմատ՝ ժողովը զբաղվեց դպրոցական տուրքի խնդրով։ Ուսուցիչ Յակ. Աղաբաբեանը ժողովականներին մանրամասն ծանօթացրեց դպրոցական պրօգրեսիվ տուրքին և յորդորեց գլուխ բերել այդ միակ միջոցը մեր ծխական դպրոցի գոյութիւնը պահպանելու համար։ Այդ առաջարկը միաձայն ընդունվեց։ Ապա ընտրվեց 5 հոգուց մի մասնաժողով (Ա. Սայեամեան, Ա. Աղաբաբեան, Գ. Յովհաննիսեան, Ա. Յովհաննիսեան և Տէր-Յակոբեան), որը դասակարգային ժողովներ է հրաւիրելու բոլոր խաւերից և նրանցից մէկ-մէկ ներկայացուցիչներ է ընտրելու, որոնց օգնութեամբ էլ տուրք է որոշվելու համայնքի անդամների վրա։ Ժողովի ուշանալու պատճառով միւս հարցերը յետաձգվեցին յաջորդ անգամվան։

Ծխական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Ուրբաթ, փետրվարի 22-ին, առաւօտեան ժամը 10-ին, Գայիանեան օրիորդաց դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ Կովկասի հայ ուսուցչական միութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովը։ Ներկայ էին 26 հոգի և մի քանի հիւրեր։ Օրակարգի խնդիրներն էին՝ 1) միութեան օրգանի հրատարակութեան հարցը, 2) լրացուցիչ ընտրութիւններ վարչութեան փոխ-անդամների և վերաստուգիչ յանձնաժողովի և 3) հերթական խնդիրներ՝ ա) Յովնանեան դպրոցից արձակված ուսուցիչների խնդիր և բ) ուսուցչական և հոգաբարձական կազմերի յարաբերութեան խնդիր։ Ժողովի նախագահ ընտրվեց պ. Յ. Տէր-Միրաքեան, իսկ քարտուղար՝ պ. Յ. Գրիգորեան։ Ժողովը, օրակարգի առաջին հարցը թողնելով ժողովի վերջին՝ անցաւ երկրորդ հարցին։ Որոշեց հրատարակել մանկավարժական ամսաթերթ՝ «Նոր դպրոց» վերնագրով, որի ծախսերը պէտք է ծածկվեն 3-ական ռուբլի բաժանորդագրութեամբ և միութեան նորերս տուած երեկոյթից գոյացած 500 ր. եկամուտով։ Խմբագրական կազմը պէտք է ընտրի վարչութիւնը։ Ապա տեղի ունեցան ընտրութիւնները։ Վարչութեան փոխ-անդամներ ընտրվեցին՝ պ. պ. Տէր-Միրաքեան, Գրիգորեան և Ս. Զօհրաբեան. իսկ վերաստուգիչ յանձնաժողովի երեք անդամների ընտրութիւնը ձայների բաժանվելու պատճառով՝ յետաձգվեց մինչև հետեւեալ ընդհ. ժողով։ Դրանից յետոյ ժողովն անցաւ Յովնանեան դպրոցից արձակված ուսուցչուհիների հարցին։ Ժողովականները, լսելով վարչութեան զեկուցումը այդ խնդրի առիթով, որ զբաղեցրել է նրան աւելի քան երեք-չորս ամիս, երկար աղմկալից, թէր և դէմ վիճաբանութիւններից յետոյ որոշեցին, ժամանակի ուշ լինելու պատճառով, այդ հարցի քննութիւնը յետաձգել նոյն օրվայ երեկոյեան։ Ժամը 6-ին տեղի ունեցաւ ժողովի շարունակութիւնը, ուր նորից քննութեան առնվեց այդ հարցը և անցաւ վարչութեան անդամներից մէկի կազմած բանաձևը, այն է վստահութեան քուէ տալ վարչութեան կազմած զեկուցմանը և առաջարկել Յովնանեան դպրոցի հոգաբարձութեանը բաւարարութիւն տալ արձակված ուսուցչուհիներին։ Ինչ վերաբերում է օրակարգի հերթական խնդիրների բ. կէտին՝ ժողովը յետաձգեց անորոշ ժամանակով։

◆ Ի նկատի ունենալով, որ Թիֆլիսում բծաւոր տիֆը լայն կերպով տարածվում է, քաղաքային վարչութիւնը որոշել է բանալ ժամանակաւոր (2 ամսով) հիւանդանոց տիֆաւոր հիւանդների համար, 25 մահճակալով, նախկին սիֆիլիսային հիւանդանոցի շինութեան մէջ։ Այդ հիւանդանոցի համար վարչութիւնը դումայից խնդրում է 2509 րուբլի։

◆ Ինչպէս յայտնի է ընթերցողներին, Թիֆլիսի պօստ-հեռագրական գրասենեակը որոշեց քաղաքում նոր յարմար շինութիւն վարձել։ Սակայն երկար որոնեց նա, բայց բոլոր ջանքերը ապարդիւն անցան։ Քաղաքում յարմար և մեծ շինութիւն չը գտնվեց։ Նկատի առնելով այդ, գրասենեակը սկզբունքով որոշել է այժմ ձեռնարկել սեփական նոր յարմար շինութիւն կառուցանելու։ Այդ նպատակով էլ նա դիմել է կենտրոնական պօստ-հեռագրական գլխաւոր վարչութեանը։

◆ Բամբակ ցանելու համար Անդիժանից Բօրչալուի գաւառն է ուղարկված մի վագօն բամբակի սերմ։ Շուտով նոյն տեղը ուղարկվելու են երկու վագօններ ևս Մուղանի դաշտում ցանելու համար և վեց վագօն էլ՝ Գանձակի նահանգի համար։ Բամբակի սերմի պուդը մինչև Եւլախ կայարանը հասցնելով նստում է 1 ր. 40 կ.։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը վճռել է ժամանակ առ ժամանակ անակնկալ վերաքննութիւն կատարել քաղաքային զանազան հաստատութիւնների մէջ և հէնց տեղերում էլ ժողովներ գումարել՝ քննութեան ժամանակ ծագած հարցերը լուծելու համար։

◆ Այսօր կը կայանայ կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան խորհրդի նիստը։ Զբաղմունքի առարկաներն են՝ վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը՝ ընկերութեան վերջին տարիների գործունէութեան մասին և ընկերութեան քարտուղարի ընտրութիւնը։

◆ Թիֆլիսի վաճառական Լեւոն Թամամշեանը ստացել է մի սպառնական նամակ, 3000 ռուբլի պահանջով։ Նամակի տակ ստորագրված է „Группа интернаціональныхъ террористовъ“ և կնքված է այդ խմբի կնիքով այսպիսի մակագրութեամբ— «Գնդակը ամենահզօր խօսքն է»։ Նամակում սպառնալիք է կարդացվում, որ եթէ փողերը չը տրվեն, Թամամշեանի ամբողջ ընտանիքը կը կոտորվի...

◆ Փետրվարի 23-ին Նուխիս Ճալա գիւղում անյայտ չարագործներ սպանել են «Արամազդ» ֆիրմայի բանւոր Յովհաննէս Տէր-Մինասեանին։

◆ Այսօր, փետրվ. 27-ին, նշանակված է Թիֆլիսի քաղ. վարչութեան և դումայի տնտեսական մասնաժողովի միացեալ նիստը՝ բեռնակիր սայլերի համար սակագին որոշելու և պարտադիր որոշումների մի նախագիծ մշակելու համար։ Պարտադիր որոշումները ի միջի այլոց որոշելու են ապրանքի նորման մի, երկու, երեք և չորս ձիերի համար։ Վերջին հարցը քննելու համար քաղաքային վարչութիւնը մտադիր է հրաւիրել նաև մի ներկայացուցիչ Կովկասեան անասունների խնամատար ընկերութիւնից։

◆ Ստացանք Գր. ա. քահ. Մանդակունու աշխատութիւնը՝ «Դրախտի մարգարիտներ Եւսեբիոսեան բուրաստանից»։ Ա. հատոր, 72 էջ, գ. 25 կ.։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը շարունակում է կրճատել ծառայողների թիւը։ Ինչպէս յայտնի է, վերջերս մեռաւ 3-րդ բաժանմունքի գործավարի օգնականը. վարչութիւնը նրա տեղ նորին չը վարձեց, այլ այդ պաշտօնը յանձնեց ջրանցքի դիւանատան կառավարիչ տ. Վարինակուն, թողնելով նոյն ռոճիկը (տարեկան 900 ր.), իսկ սրա տեղ նշանակեց մօտ 14 տարի վարչութեան մէջ ծառայող տ. Շերեմետեւսկուն։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Փետրվարի 24-ին, երեկոյեան ժամը 7-ին, Բարօնսկայա փողոցում, № 34 տանը, Նատալիա Սարգսեանի բնակարանում [illegible] և լապտերը վայր են ընկնում ան-

ղանից, որով Սարգսեանի մօտ գտնվող հիւրերը՝ Սօֆիա Գալօվեանը, նրա ամուսին Աւետիսը և 7-ամեայ որդի Սուրաձը այրուածքներ են ստանում: Վնասվածներին տանում են հիւանդանոց, ուր բժշկական օգնութիւն հասցնելով Աւետիսին և Սուրաձին արձակում են, իսկ Սօֆիային պահում են հիւանդանոցում:

✦ Փետրվարի 23-ին չարագործների ձեռքով վիրաւորված 7-րդ քաղաքամասի Թաղական վերակացու Սեդլենիկօվը փետրվարի 25-ին վախճանվեց:

✦ Փետրվարի 25-ին, երեկոյեան ժամը 7-ին, Գօլօվինսկի պրօսպեկտի և Կրուգլենշտերնսկի փողոցի անկիւնում, № 415 կառքը, որի մէջ նստած էր Թեֆլիսեցի Գրիգոր Գամբրեկէլօվը, տակովն արեց պարսկահպատակ Խաչատրեանին և մեծ ջարդուածքներ հասցրեց: Խաչատրեանին բժշկական օգնութիւն հասցնելու համար ուղարկեցին Միքայէլեան հիւանդանոցը, որտեղից և արձակեցին տուն:

✦ Փետրվարի 25-ին երեկոյեան ժամը 8 և 45 րօպէին, Վերայի գառիվերում, Կուրցխալիայի փայտէ պահեստի մօտ, անյայտ չարագործներ ատրճանակներից, էլեկտրաքարշի վագօնում նստած ժամանակ, կրակեցին Թիֆլիսի Նահանգական ժանդարմական վարչութեան կառավարչի օգնական ռոտմիստր Վլադիմիր Ռունիչի վրա երեք անգամ պարանոցից. գնդակները անցան պարանոցի միջով և դուրս եկան երկու աչքերից. մահը վայրկենական էր: Դիակը ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոց: Վագօնում գտնվեց «բրաունինգ» ատրճանակի փամփուշտի մի դատարկ գիլզ:

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

(Բագուի լրագիրներից)

✦ Շամախում փետրվարի 21-ի առաւօտեան վախճանվել է ընդհանուրի համակրանքը վայելող Հաջի Մէջիդ էֆենդին:

✦ Բագւում կազմակերպվում է լատիշների ընկերութիւն:

✦ Բագուի վաճառական Կ. Ղորղանեանը իրաւունք է ստացել հրատարակել Բագւում հասարակական-քաղաքական և գրականական շաբաթաթերթ «Бакинскій Листокъ» անունով: Շաբաթաթերթի առաջին համարը լոյս կը տեսնի այս շաբաթ:

✦ Բագուի նաւթարդիւնաբերողների համագումարի խորհուրդը հրահանգով պատուիրել է բոլոր ֆիրմաներին. 1) Խրօնիքական հիւանդներին չը պէտք է պահել համագումարի խորհրդի հիւանդանոցներում: Ֆիրմաները պարտական են երկու շաբաթվայ ընթացքում, երբ բժիշկները կը վկայեն, որ հիւանդանոցում պառկած բանւորը հիւանդ է խրօնիքական հիւանդութեամբ, վերցնել նրան հիւանդանոցից: 2) Համագումարը չէ վճարելու այն բժիշկներին, որոնց մօտ բժշկվելու են գնում բանւորները, և երբեմն հիւանդներ բժշկող բժիշկները պէտք է ազատ լինեն հիւանդ բանւորներին երկաթուղու տոմսակներ տալուց:

✦ Բագուի քաղաքագլուխը կարգադրել է Բագուի ոստիկանապետին՝ արգելել վաճառելու «Глазъ и Кретингенъ» ֆիրմայի № 7 ալիւրը և Սկօբօլեվի № 8 ալիւրը:

✦ Անցեալ շաբաթվայ ընթացքում Բագուի կենտրօնական բանտից ուղարկված են բանտարկեալների մի քանի խմբեր նշանակված տեղերը: Կենտրօնական Ռուսաստան առ այժմ բանտարկեալներ չեն ուղարկվում ճանապարհի ձիւնային մրրիկների պատճառով: Բայց և այնպէս ներկայումս բանտում մնում են մօտ 800 բանտարկեալներ:

ՄԱՄՈՒԼ

Արփիարի սպանութիւնը, ինչպէս տեսանք, ահագին զայրոյթ առաջ բերեց թէ առաջադէմ և շիտակ մամուլի և թէ հասարակութեան ամեն տեսակ խաւերի և դասակարգերի մէջ: Հայ մամուլի մէջ միայն մի օրգան յանցաւոր լռութիւն պահպանեց և իր վարմունքով նոյն իսկ կասկած յարուցեց, որ իր ղեկավարների համար այդ սոսկալի ոճրագործութիւնը գուցէ և ոճրագործութիւն չէ: Այդ վարմունքը խարանվեց թէ «Երկրի Ձայնը» շաբաթաթերթի և թէ մեր լրագրի կողմից:

Իր կոչման բարձրութեան վրա կանգնած մնաց և տեղական ռուս մամուլը:

«Зак.» թերթը մի երկրորդ յօդուած նուիրեց այդ հարցին (№ 35):

Հայոց գրականութիւնը և մասնաւորապէս հրապարակախօսութիւնը,—գրում է նա,—նորերս կրեց մի ամենախոշոր կորուստ. չարագործի ձեռքով Եգիպտոսում, Կահիրէում, սպանվեց ժամանակակից հրապարակախօսներից լաւագոյնը—Արփիար Արփիարեանը—յայտնի «Հայկակ» կեղծանունով:

Աշակերտ Մխիթարեանների, շքեղ ոճաբան, աչքի ընկնող բանաստեղծ, խստապահանջ ժուրնալիստ, ազգային ժողովի երեսփոխան, խմբագիր «Հայրենիք» լրագրի, անխոնջ գրող-նովելլիստ և «Մշակի» աննման թղթակից Հայկակ - Արփիարը ամենաժողովրդական անձն էր բոլոր ժամանակակից հայերի մէջ Կ. Պօլսում:

Նրան նոյնպէս լաւ ճանաչում էին Թիւրքաց Հայաստանում, ինչպէս և մեզանում՝ Ռուսաստանի սահմաններում: Հայկակի թղթակցութիւնները 80-ական թուականներից հայերի համար նոյն դերն էին խաղում, ինչպէս հանգուցեալ Իօլլոսի թղթակցութիւնները «Рус. Вѣд.» լրագրի մէջ: Թեմաները միևնոյնն էին. պարլամենտարիզմ, ժողովրդական կարիքներ, ժողովրդական կամք և... նրանց ներկայացուցիչները պարլամենտներում—որպիսի հաստատութիւն Թիւրքահայերի համար հանդիսանում էր Կ. Պօլսի «ազգային ժողովը», ուր հանգուցեալը երկար տարիներ պատգամաւոր էր, համակված խիստ սահմանադրականութեան ոգով այդ բառի լաւագոյն մտքով: Հանգուցեալ Արփիարի անձնաւորութիւնը այնքան հմայիչ էր, որ ամենատաղանդաւոր վիպասան հանգուցեալ Րաֆֆին նրան իր «Կայծեր» վէպի հերոսը դարձրեց և առաջ քշեց նրան իբրև ապագայ ազատ Թիւրքիայի գործիչ:

Եւ զզուելի մարդասպանը զրկեց նրան կեանքից նրա համար, որ հանգուցեալը իր շիտակ և ճշմարտասէր գրչով մերկացնում էր բոլոր գարշութիւնները, ամբողջ շանտաժը, որ կատարում են զանազան անձինք և քաղաքական խմբեր: Ամբողջ հայ մամուլը, հայ ժողովրդի լաւագոյն մասի հետ, ողբում է հանգուցեալ Հայկակի անփոխարինելի կորուստը և անիծում է այդ սպանութեան հեղինակներին:

Ժամանակ է, որ հայ ժուրնալիստները բարձրացնեն իրանց ձայնը, խարանելու անէծքով և խայտառակութեամբ նրանց, որոնք յանդգնեցին զրկել կեանքից մեր լաւագոյն եղբայրակցին ըստ գրչի և քաղաքացու այդ բառի լայն և լաւագոյն մտքով:

Եւ սակայն, ամօթ մեր գրողների, գոնէ իրանց հայ գրականութեան կորիֆէյ համարող գրողների, պէտք է ասենք, որ նրանք լուռ են մնում և նրանցից ոչ ոք հարկ չը համարեց իր բողոքի ձայնը լսեցնել տալ: Դա էլ մի ապացոյց է, թէ որքան հայ գրականագէտների բարքերը փչացած են: Բողոքող Զօլաներ կարող է ստեղծել միայն ֆրանսիական մեծ ազգը, իսկ խեղճուկ հայ ժողովուրդը, ի հարկէ, անկարող է Զօլաներ արտադրել: Մեր գրողները ընդունակ են միայն խօսքով քարոզել, բայց երբ առիթ է ներկայանում այդ քարոզը գործով ցոյց տալ, նրանք Զաքարիայի պապանձումն են պահում մինչև ինչ-որ զանազան գծուծ անձնական նկատումներով...:

*

«Հնչակ» թերթի յունվարի համարում տպված է Ս. Սապահ-Գիւլեանի մի լուրջ յօդուածը «Թիւրք բռնապետութիւնը և երիտասարդ թիւրքերը» վերնագրով, և ցոյց է տրվում, թէ որքան անհիմն, անտրամաբանական և հայ ժողովրդի համար վնասակար են այն որոշումները, որ կայացրել է վերջերս Պարիզում գումարված կօնգրէսը Դաշնակցութեան մասնակցութեամբ: Այդ որոշումով կօնգրէսը ոչնչացնում է հայկական դատը, որ այնքան մեծ զոհեր է նստել հայ ազգին, և դաշնակցականները, որոնք իբրև մի մեծ յաղթութիւն թմբկահարեցին այդ կօնգրէսի որոշումները, ինչպէս ընկել են Թիւրք նացիօնալիստների ծուղակը և առանց հասկանալու, կուրացած լոկ ցուցամոլութիւնից, ինչպէս դաւաճանել են հայ ժողովրդի կենսական շահերին և քսան տարվայ թափված արիւնին:

«Քսան տարվայ թափված արիւնից յետոյ, մենք չենք կարող մեզ դաւաճանել, ձեռք վեր առնել մեր իրաւունքներից և ընկնել ստուերների ետևից»—վերջացնում է իր յօդուածը Սապահ-Գիւլեանը:

Մենք առիթ կունենանք մեր կարծիքը յայտնելու այս հարցի առիթով:

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խանքենդ, 22 փետրվարի

«Վտակ» լրագրի № 37-ում կարդում ենք. «Մութ ոյժերը ասպարէզ են եկել...: Եւլախ-Շուշի գծի վրա, դեռ Աղդամ չը հասած, մի քանի զինված թուրքեր յարձակվում են մի կառքի վրա, բոլոր ճամբորդներին թալանում, իսկ մի նշանաւոր հայ օրիորդի բռնաբարում մի քանի հոգով»...:

Այս կողոպտման մասին ինքներս հաղորդագրեցինք «Մշակին» (№ 38), բայց օրիորդի բռնաբարման մասին խիստ զգուշութիւն պահպանեցինք, համարելով այդ լուրը կարօտ յոյժ մանրազննին հետազօտութեան:

Այժմ հաստատ կարող ենք ասել, որ օրիորդը բռնաբարման չէ ենթարկված, չէ տարված նոյնիսկ նրա հագի թանգագին մուշտակը: Տարվել է միայն նրա սնդուկը:

Հերքելով «Վտակի» այդ անհիմն լուրը, յայտնում ենք միաժամանակ, որ կողոպտման գործողութիւնները կատարվել են ոչ թէ «դեռ Աղդամ չը հասած», այլ Աղդամից բարձր՝ Ասկերանի պաշտավայրին հասած տեղը: «Тиф. Листокъ»-ի այս մասին հաղորդածը, որից արտատպել է և «Каспій»-ն, առնված է թուրքական աղբիւրներից և զուրկ է ճշմարտութիւնից:

Այս կողոպտման մասին ձերբակալված են շատ թուրքեր և բանտ նետված:

**

—

Թիֆլիս, 22 փետրվարի

Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը իր 1908 թւի նիստերից մէկում զբաղվեց այն հարցով, թէ ինչ միջոցներով կարելի է զանազան անձնաւորութիւնների հնարաւորութիւն տալ իրանց ձեռագործներն ի ցոյց դնել և հասարակութեանը ծանօթացնել այդ գործերի հետ:

Շատերը, ինչպէս յայտնի է ընկերութեանս, ունեն զանազան ձեռագործներ, բայց յարմարութիւն չունեն հասարակութեան ուշադրութիւնը դարձնելու դրանց վրա, որպէսզի կարողանան դէպք եղած ժամանակը վաճառել: Գաւառներում նոյնպէս գուցէ կան հետաքրքրական ձեռագործներ, ուշադրութեան արժանի, սակայն որովհետև այնտեղ պահանջ չէ զգացվում այդպիսի իրերի, մնում են առանց գործադրութեան, իսկ այդ գործերն արտադրողները այլևս չեն շարունակում իրանց գործով զբաղվել:

Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութեանը վարչութիւնը իր խորհրդածութեան նիւթ դարձնելով վերոյիշեալ հարցը, որոշեց ընկերութեան ընդհանուր ժողովի օրը, որ տեղի է ունենալու մօտաւորապէս մարտի կէսին, երբ ի ցոյց են դրվում ընկերութեան վաճառելիք ձեռագործները, յատկացնել մի սենեակ այն բոլոր անձնաւորութիւնների համար, որոնք կը ցանկան իրանց ամեն տեսակի ձեռագործներն ի ցոյց դնել: Այս որոշումն առայժմ իրագործելուց յետոյ՝ վարչութիւնս մտադիր է ապագայում աւելի նպատակայարմար կերպով կազմակերպել այս գործը՝ աշխատանքի բիւրօ հիմնելով:

Վարչութիւնս խնդրում է այն անձանց, որոնք ցանկանում են մասնակցել ձեռագործների վերոյիշեալ ցուցահանդիսին, նախօրօք յայտնել իրանց ցանկութիւնը վարչութեանս անդամ տիկ. Ն. Ղամբարեանին, Լաբօրատօրնայա փողոց, № 13.

Փոխ-նախագահ՝ Հ. Մարտիրոսեան

Անդամ-քարտուղար՝ Ե. Յարութիւնեան

—

Ներքին-Թաղավարդ (Վարանդա), 20 փետ.

Հարկ ենք համարում մեր երախտագիտական զգացմունքներն ու անհուն շնորհակալութիւնները յայտնել բագուբնակ տիկին Հռիփսիմէ Տատուրեանին, որը ներկայ 1907—08 ուսումնական տարվայ համար յատկացրեց Ներքին-Թաղավարդ գիւղի ծխական դպրոցին 600 ր. և այդպիսով ապահովեց դպրոցի գոյութիւնը մի տարով, որով և հնարաւորութիւն տուեց գիւղի մատաղ սերնդին շարունակելու իր սիրած ու փայփայած ուսումը:

Գերազնիւ տիկնոջ կատարած այդ իրօք «մեծ գործը» երբեք չեն մոռանայ Թաղավարդցիները. և նրանք լաւ գիտակցելով կատարած գործի վսեմութիւնը, ամեն օր օրհնում են նրա կեանքը:

Ի դիմաց Ներքին-Թաղավարդ գիւղի հոգաբարձութեան՝

Ուսուցիչ՝ Աբրահամ Այդինեան

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

ՎԵՐԽՆԵԴՆԵՊՐՕՎՍԿ: Քաղաքային դուման որոշեց բանալ քաղաքային ալիւրավաճառանոց՝ ազգաբնակութեանը ալիւրը իր իսկական գներով վաճառելու համար:

ՊԵԿԻՆ: Ցանկարծամահ եղաւ ռուսաց դեսպան Պօկատիլօվը:

ՊԱՐԻԶ: Պատգամաւորների պալատը 459 ձայնով ընդդէմ 64-ի ընդունեց եկամտային հարկի օրինագծի առաջին յօդուածը:

ՍԱՄԱՐԱ: Փետրվարի 22-ին, առ. ժամը 6-ին, Բէրշօգուր և Կարագանդի կայարաններին միջև, պօստային գնացքը խորտակվեց: Երկու շոգեմեքենաները և պօստային վագօնը խրվեցին հողի մէջ, 3-րդ կարգի վագօններից մէկը ջարդվեց: Ճանապարհորդները խորտակման ժամանակ քնած էին: Սպանված են 12 հոգի, ծանր վիրաւորված են 36, թեթև՝ 7 հոգի: Պատճառը այն էր, որ ռելսը կոտրվեց:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

Թիֆլիսից Բագու	**Բագուից Թիֆլիս**
Արագ. գիշ. 12 ժ. 28 ր.	Արագ. երեկ. 5 ժ. 02 ր.
Պօստ. երեկ. 9 ժ. 41 ր.	Պօստ. գիշ. 12 ժ. 21 ր.
Մարդ. առաւ. 7 ժ. 53 ր.	Մարդ. առաւ. 4 ժ. 58 ր.
Թիֆլիսից Բաթում	**Բաթումից Թիֆլիս**
Մարդ. առաւ. 10 ժ. 58 ր.	Մարդ. առաւ. 10 ժ. 38 ր.
Պօստ. առաւ. 9 ժ. 15 ր.	Պօստ. առաւ. 6 ժ. 49 ր.
Մարդ. երեկ. 11 ժ. 22 ր.	Մարդ. երեկ. 5 ժ. 46 ր.
Թիֆլիսից Երեւան	**Երեւանից Թիֆլիս**
Պօստ. գիշ. 1 ժ. 8 ր.	Պօստ. գիշեր. 1 ժ. 18 ր.
Մ.-ապր. գիշ. 3 ժ. 16 ր.	Մ.-ապր. առ.գ. 12 ժ. 52 ր.
Կարսից. Ալեքսանդ.	**Ալեքսանդր. Կարս**
Պօստ. երեկ. 5 ժ. 48 ր.	Պօստ. գիշեր. 12 ժ. 23 ր.
*)Մ.-ապր. առ. 5 ժ. 25 ր.	*)Մ.-ապր. գիշ. 3 ժ. 09 ր.
Թիֆլիսից Ջուլֆա	**Ջուլֆայից Թիֆլիս**
Պօստ. գիշ. 1 ժ. 08 ր.	Պօստ. գիշ. 6 ժ. 48 ր.
Մ.-ապր. գիշ. 3 ժ. 16 ր.	Մ.-ապր. գիշ. 6 ժ. 54 ր.

*) Այս գնացքները երթևեկում են միայն պէտք եղած ժամանակ:

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՒՐՍԱՅԻՆ ԳՆԵՐԸ

26 փետրվարի 1908 թ.

Տոկոսաբեր արժէթղթեր

Տօմսակ I փոխ. վիճակախաղի	334 ր.	կ.
Տօմսակ II փոխ. վիճակ.	267 ր.	50 կ.
Տօմսակ III փոխ. Ազն. Բանկի	225 ր.	— կ.
4% Պետական Ռենտա	74 ր.	$37\frac{1}{2}$ կ.
5% փ. թ. Պետ. Ազն. Հ. Բ.	83 ր.	50 կ.
$4\frac{1}{2}$% փ. թ. Պետ. » »	78 ր.	25 կ.
4% փ. թ. Պետ. » »	72 ր.	— կ.
$3\frac{1}{2}$% Գրաւ. թ. Պետ. » »	69 ր.	— կ.
5% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	84 ր.	— կ.
$4\frac{1}{2}$% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	77 ր.	50 կ.
4% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	72 ր.	— կ.
5% Ներքին փոխ. 1905 թ. I	95 ր.	50 կ.
5% » » » II	95 ր.	— կ.
5% Արտաքին փոխ. 1906 թ.	93 ր.	$37\frac{1}{2}$ կ.

ԲՕՐՍԱ

Լոնդոնի վրա 10 ֆ. ստ. արժէ	95 ր.	85 կ.
Բերլինի վրա 100 մարկը »	46 ր.	81 կ.
Պարիզի վրա 100 ֆրանկը »	38 ր.	5 կ.
Նաւթ. Թղթ. Նոբել ընկ. »	11,175 ր.	— կ.
Կասպիական ընկ. ակցիա »	4200 ր.	— կ.
Բագուի ընկ. » »	540 ր.	— կ.
Մանթաշեանի » »	149 ր.	— կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի, ներքին և ներարդային:
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕՆԵՎԱ—$9\frac{1}{2}$—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի:
Ա. Փ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԱ—$1\frac{1}{2}$—2 ժ. մանկաբարձութեան:
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Մի փորձված երիտասարդ ՈՐՈՆՈՒՄ Է արտագրութիւններ, կասսիրի, գործակատարի կամ տների կառավարչի պաշտօն: Համաձայն է գնալ նաև ուրիշ քաղաքներ: Հասցէն՝ 8 уч. Свѣчной пер. № 10 Самсону Оганесянъ Акопянцъ. Ունի նաև երաշխաւորութիւններ:
5—5

Նոր լոյս տեսաւ
ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ
ԾԻԾԱՂԱՔԵՐ
Հայրիկ, Պարոնեան, Պըլը-Պուղի, Գող-Մխիթար, Դանտէ, Լաֆօնթէն, Եզովպոս, Ողոմպիանոս, Մօլլա Նասր-Էդդին, Կրիլօվ, Բալակիրեվ և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ:
182 ԸՆՏԻՐ զուարճախօսութիւն,
Անեկդօտներ, 112 երես.
ԳԻՆՆ է 20 կ.
Դիմել՝ գրավաճառներին: Ինձից գումարով պահանջողներին 20% զեղչ և ճանապարհածախսը իմ հաշւին:
Ցանկացողները կարող են դիմել՝ Тифлисъ. Хачатуру Хачатріанъ, 9 уч. Лысогорскій пер. № 10.
(օ. մ.) 10—6

ԱՎ. ՍԱՐԳԻՍՕՎԻ
այգին բաց է Թողնում արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակի մրգատու ծառեր: Կայարան ՍԿՐԱ, Անդրկով. երկ., Ավսարգիսօվին: Կատալօգը ուղարկվում է
ՁՐԻ
(Ե. Հ. Շ.) 15—14

Առանց ՄՐՑՄԱՆ



Միայն 2 ր. 75 կօպէկով ամեն ոք կարող է գնել տղամարդկանց գրպանի հիանալի նիկելած և քանդակված բաց «Geneve» ժամացոյցը, որը ոչնչով չէ զանազանվում 84 պրօբի արծաթէ ժամացոյցներից: Բացի դրանից, այդ ժամացոյցները «Anker» հիանալի կօնստրուկցիա ունեն, ճշտված են և հասցված են մինչև րօպէները, ուղղակի «Geneve» հռչակաւոր գործարանից, «Remontoire» առանց բանալիքի, 36 ժամը մէկ անգամ: Ուղարկում ենք այդպիսիները միայն կարճ ժամանակով, վերադիր վճարով և առանց կանխավճարի 2 ր. 75 կօպէկով, 2 հատը—5 ր.: Ձրի կցում ենք շղթայ սպիտակ, չը սևացող մետալից, բրէլօկի հետ միասին: Ժամացոյցի ճիշտ ընթացքի համար երաշխաւորութիւն 6 տարով:
Հասցէ՝ Т-во „Консеквентъ", Варшава, М., Новолипки, 16.
Պօստային ծախսերի համար մէկ կամ չորս ժամացոյցի համար աւելացված է 50 կ. Սիբիր—75 կօպ: Սիբիր առանց կանխավճարի չէ ուղարկվում: Թղթագրութիւնը ռուսերէն լեզուով:

Լոյս տեսաւ և վաճառվում է՝
ԽԱՆ-ԱԶԱՏ
ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
ԽՐԻՄԵԱՆԻ ՄԱՍԻՆ
Գինն է 20 կօպ.
«Գուտտենբերգ» և «Փարոս» գրավաճառանոցներում: Կարելի է դիմել և հեղինակին «Մշակի» խմբագրատանը: Գումարով գնողներին սովորական զեղչ:
(ա. օ.) 5—1

Շուլավերի ծխական դպրոցների համար
հարկաւոր է
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
հայոց լեզուի (18 դաս), Թւաբանութեան (4 դաս) և գեղագրութեան (4 դաս): Ռոճիկը երեք ամսվայ համար 150 րուբլի: Դիմել՝ «Կովկասեան գրավաճառանոց» Թիֆլիսում, Իսահակեանին:
2—1

Մազերի պոմադա
ՄԱՐԻՍ. ՆԻԿՕԼՍԿՈՒ
Ճիշտ և անվտանգ միջոց մազերը թափվելու դէմ. արագ ամրացնում է մազերը, աճեցնում է և բժշկում է հիւանդ կաշին: Հէնց այս պոմադան աճեցնում է և փայլ է տալիս մօրուքին և բեխերին: Գործածելու ժամանակ սրսկել մազերի արմատում և գործածել առհասարակ քիչ-քիչ: Այս պոմադան թոյլատրված է՝ պատրաստելու և վաճառելու՝ բժշկական բաժնից: Վաճառվում է Կովկասեան դեղատ. ընկերութեան մէջ և Րօստօմօվի, Ռեվազովի և Խիզանովի դեղ. պիտոյքների վաճառանոցներում: 5—4

Լոյս տեսաւ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
ԿԵԱՆՔԻ ՎԷՊԸ
Գինն է 75 կօպէկ
Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» և «Փարոս» գրավաճառանոցներին:
5—3



ԿԱՍԿԱՐԱ-ՄԻԴԻ
Պիլիւլներ, ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՄՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ
Չափը.—2 պիլիւլ երեկոյեան պառկելիս: Կասկարա-միդին չէ առաջացնում ոչ փորացաւ, ոչ սիրտ-խառնուք, ոչ էլ լուծողութիւն:
Դեղատուն—Midy, 113, Faubourg St. Honoré, Պարիզ:
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ:
(7, 17, 27) (165951) 24—10

Զգուշացէ՛ք կեղծումներից
ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
(Թոյլատրված Ռուսաստանում)



Չը կայ լաւագոյն միջոց, քան Սանտալ Միդին, պերելոյի (հօնօրրէյ) ամենայարատև դէպքեր բժշկելու համար:
Սանտալ Միդիի յատկութիւնը և էսսենցիայի մաքրութիւնը թոյլատրում են գործածել առանց փասելու մարսողական գործարաններին:
Պահանջեցէ՛ք գրված լինի „Midy"
Գտնեսք Ռուսաստանի գլխաւոր դեղատներում:
(2. 1 ան. շ.) 25—15

Электропечатня «ЭКОНОМІЯ» Аваќъ Мугдусіакоповъ съ С-ми. Большая Ванкская т. д. Семинаріи № 3.